

934

1 [Un4rus]

2 - 96

թիվ 1
1898

2070

ՅՈՒՆԱՑ ՌԻՍՈՒՑԻՉ

Ս Ո Վ Ք Փ Ա Տ Է Ս Լ

Թարգմ. ռուսերենից

Տիրուհի Կոստանեանց.



Թ Ի Գ Լ Ի Ս

Ճպատաճ Մր. Յարաձեկի, Նիկոյ. փ. տ. 21

1898

1/Ընդրանութ
Հ-91

1 [Անկրամ]

2-95

175

Կ.

ՅՈՒՆԱՑ ՈՒՍՈՒՑԻՉ

ՍՊԱՔԲԵՏՔԵՍԼ

91630

Թիարգմ. ոռուերկենից

Տիրուհի՝ Կոստանեանց.



ԹԻԳԼԻՄ

Ճպարան Մ. Ճարաձեկի, Նիկոլ. փ. տ. 21

1898

9282-2
Дозволено цензурою Тифлисъ, 8-го Мая
1897 г.

ՅՈՒՆԱՑ ՈՒՍՈՒՑԻՇ ՍՈԿՐԵՏԵԽԸԼ

Ա.

Սոկրատէսը ուզում է իմանալ, թէ ինչ-
պէս պէտք է ապրեն մարդիկ և լսում է իւր
հոգու մէջ մի ձայն:

Սոկրատէսը ծնաւ Յունաստանի Աթէնք
քաղաքում. նորա հայրը քարտաշ էր, իսկ մայ-
րը մանկաբարձ: Նա ստէպ ասում էր՝ թէ իւր
մայրը մանկաբարձ էր և օգնում էր մարդկանց
աշխարհ գալու, ինքն էլ նոյնն է անում, մի-
այն օգնում է ոչ թէ մարդկանց, այլ մարդ-
կային մտքերին աշխարհ գալու:

Սոկրատէսի հայրը ուսուցանում էր նո-
րան իւր արհեստը. նմանապէս ուղարկում էր
վարժարան, գրել, կարդալ և ուրիշ գիտու-
թիւններ սովորելու: Աթէնքում բոլորը գրա-
գէտ էին և կային շատ զանազան վարժարան-
ներ. կային ամենաաղքատ դպրոցներ, որտեղ
մանուկները բակումն էին պարապում և տառե-

րը գրում էին աւազի վերայ փոքրիկ ձողնրով.
կային աւելի հարուստ դպրոցներ, որտեղ սովորում էին գրագիտութիւն, գծագրութիւն,
հաշիւ և կարգում էին ուսանաւորներ. կային և
ամենաբարձր վարժարաններ, որտեղ աշակերտ-
ները ուսանում էին այն ամենը, ինչ որ այն
ժամանակ յայտնի էր յոյներին:

Սոկրատէսը գեռ փոքրութիւնից հասկա-
ցող էր և սիրում էր ուսանել. այնպէս որ
հայրը տուեց նորան ամենաբարձր վարժարա-
նը. Սոկրատէսը սովորեց այդտեղ ամեն գի-
տութիւն և կարգաց բոլոր յունական ամենա-
լաւ հեղինակների գրուածքները:

Սոկրատէսը վերջացրեց ուսումը, վերա-
դարձաւ հօր մօտ և կրկին սկսեց քարտաշու-
թիւն անել. նա լաւ էր աշխատում, բայց գոր-
ծի ժամանակ շուտ-շուտ մտածմունքի մէջ էր
ընկնում. Սոկրատէսը մտածում էր այն մասին՝
թէ նա անցաւ ամեն գիտութիւն և իմացաւ
այն բոլորը, ինչ որ ուսուցել են մարդուն,
բայց ոչինչ չիմացաւ, ինչ որ պէտք էր իրան
և ամեն մարդու իմանալու:

«Հարկաւոր է, մտածում էր Սոկրատէսը,
հասկանալ, թէ մարդ ինչպէս պէտք է ապրի,
թէ չէ, մենք բոլորս շատ ենք ուսանում, բայց
մեր ուսումից օգուտ չկայ. եթէ մենք մինչեւ

անգամ բոլոր աստղերը ճանաչէինք, ծովի բո-
լոր կաթիլները համարէինք և այդ ուսուցա-
նէինք ամենըին, ես գիտեմ, որ դորանից մեր
կեանքը աւելի լաւ չէր լինի. մենք բոլոր մար-
դիկս աշխատում ենք, որոնում ենք մեզ հա-
մար բարիք, իսկ երբ գործը քննենք, տեսնում
ենք, որ փոխանակ բարիքի, մենք մեզ համար
չարիք ենք պատրաստում և մեզանից ոչ ոք
չգիտէ, թէ ինչն է մարդուս իսկական բարիքը:
Այն ես շատ ուսում առայ, բայց ինձ որ
հարցնեն թէ ինչպէս պէտք է մարդ ապրի,
ես ինքս էլ չգիտեմ. այն ինչ, այդ մէկը հար-
կաւոր է, որ մարդ գիտենայ և միայն այն օ-
գուտն ստացայ իմ ուսումից, որ իմացայ, թէ
մեր բոլոր ուսումը դատարկ բան է. ուսանե-
լուց առաջ, ես կարծում էի թէ որ և է բան
գիտեմ, իսկ հիմայ հաստատ համոզուած եմ,
որ ոչինչ չգիտեմ. ինձ ուսուցանում էին աս-
տուածների մասին, թէ նորա են մարդուն
ստեղծել և վարձատրում են նորան, ով որ ի-
րանց պատուիրանովը ապրի, ու պատժում են,
ով որ աստուածների կամքին հակառակ գնայ.
բայց աստուածները ինչ են կամենում մեզա-
նից և ինչպէս են հրամայում մեզ ապրել:

Եւ Սոկրատէսը սկսեց մտարերել այն ա-
մենը, ինչ որ իրան սովորեցրել էին աստուած-

ների մասին։ Յունաց մէջ աստուածների թիւը շատ էր. առաջին երկնքի աստուած, որ ամենազլսաւորն էր. երկրորդը ծովի աստուած, երրորդը քամու աստուած, չորրորդը պատերազմի աստուած, հինգերորդը արևի աստուած, վեցերորդը պատերազմի աստուած, հօթներորդը մահուան աստուած։

Կային և աստուածուհիներ՝ կար աստուածուհի իմաստութեան, աստուածուհի իժնամութեան, աստուածուհի երկրագործութեան, աստուածուհի ձեռագործի և էլի ուրիշ շատ աստուածուհիներ։ Դրուած էր աստուածների մասին, թէ ապրում են նոքա երկնքում, ինչպէս մարդիկ երկրիս վերայ և միմնանց ու մարդիկների հետ ոլս են պահում։

Զևսը երկնքում իւր թագաւորութիւնը սկսեց նորանով, որ վայր ձգեց երկնքից իւր հարազատ հօրը։ Սոկրատէսը մտաբերեց այդ, մտաբերեց և այն, որ Զևսը իւր կնոջ հետ կռւում էր և շուտ-շուտ խարում էր նորան։

Նոքա թէի աստուած էին կոչում, բայց գործերը մարդկային էին։

Եւ մտածեց Սոկրատէսը՝ «ոչ, դոքա իսկական աստուածներ չեն և նոցանից չէ կարելի իմանալ թէ ինչպէս պէտք է մարդ ապրի. այդ աստուածները նոյնպէս թոյլ են, ինչպէս

և մենք մարդիկս. նոքա իրանը ճշմարտութեամբ չեն գործում, որ նոցանից սովորէինք զոկել բարին չարից. իսկ իսկական աստուածը պէտք է որ ճշմարիտ լինի և ուսուցանէ, թէ մարդ ինչպէս պէտք է ապրի։

Եւ Սոկրատէսը սկսեց որոնել այդպիսի մի աստուած. նա շատ ժամանակ տանջուեց. նորան իրան մտքերը հանգստութիւն չէին տալիս ոչ ցերեկ և ոչ գիշեր. բայց եկաւ ժամանակը և Սոկրատէս գտաւ այն, ինչ որ որոնում էր. ճանաչեց նա այն աստծուն, որը ծանօթ չէր յոյներին և նա գտաւ նորան՝ այդ խիղճն էր։

Մինչև որ Սոկրատէսը որոնում էր այդ արդար աստծուն, պատահում էր, որ նա շատ անգամ երր մտածմունքի մէջ էր ընկնում, ուզում էր այս կամ այն գործը անել, յանկարծ լսում էր իւր հոգու մէջ մի ձայն. եթէ լաւ գործէր, ձայնն ասում էր՝ արա Սոկրատէս, իսկ եթէ վատ էր, ձայնն ասում էր՝ մի անիր Սոկրատէս. նա սովորեց ականիզ գնել այդ ձայնին, որը ստէպ-ստէպ խօսում էր հետը և ինչ որ նա ասում էր, Սոկրատէսը հաւատում էր։

Եւ մտածում էր Սոկրատէսը՝ «Եթէ լաւ է, ձայնն ասում է, ով է ինձ ասողը, 'ի հարկէ ես չեմ, այլ մի ուրիշը. բայց գա ով է. այդ ձայնը ինձ միշտ ճշմարտութիւն է ասում.

նա ինձ ուսուցանում է ճշմարտութեամբ ապ-
քել, այդ պատճառով գիտեմ, որ դա Աստու-
ծոյ ձայնն է»:

Այդ ձայնը Սոկրատէսը սկսեց անուանել
Աստուածային և այդ ձայնը նորան ցոյց տուեց,
ինչ որ նա ուզում էր իմանալ՝ թէ մարդ ի՞նչ-
պէս պէտք է ապրի:

Եւ երբ Սոկրատէսը գտաւ այդ աստծուն,
տեսաւ որ ամեն մարդ նորան կարող է ճանա-
չել և այնպէս, ինչպէս ինըր, այդ աստծուց
կարող են իմանալ, թէ ի՞նչպէս պէտք է ապ-
րել:

Եւ ասաց ինըն իրան Սոկրատէսը՝ «այս
մեծ գործ է, եթէ ես ճանաչեցի ճշմարտու-
թիւնն ու բարկը, պէտք է այդ և ուրիշնե-
րին ուսուցանեմ, որ նոցա համար էլ լաւ լինի»:

Սոկրատէսը երբ հասաւ այդ կէտին, նո-
րա հայրը մեռաւ. ինըը ամուսնացած էր և ու-
նէր զաւակներ. երբ նա ասաց կնոջը, թէ աս-
տուծոյ ձայնը իրան յայտնուեցաւ, կինը չհա-
ւատաց, իսկ երբ Սոկրատէսը յայտնեց նորան,
թէ այդ ամենքին պէտք է ասէ և ուսուցանէ,
այն ժամանակ կինը սկսեց համոզել նորան՝
«այդ մի անիր, կըթողնես արհեստդ, կսկսես
ուսուցանել ժողովրդին ու միայն անբախտու-
թեան կըհանգիպես և այն ժամանակ ես և ե-

րեխայրս խեղճ կը մնանք. թնդ այդ մտած-
մունքներդ, առանց քեզ էլ շատ ուսուցիչներ
կան»:

Բայց Սոկրատէսը կնոջը չսեց. նա տես-
նում էր, որ իւր շուրջը ժողովուրդը աղքա-
տութեան մէջ տանջում է այն պատճառով,
որ չգիտէ ի՞նչպէս ապրել և եթէ ինըը այդ
գիտէ, չպէտք է ծածկէ ուրիշներից, աստուա-
ծային ձայնն էլ այդպէս էր ասում նորան:

Սոկրատէսից առաջ, ամենահին ժամա-
նակները, յոյները լաւ էին ապրում. նոցա եր-
կիրը տաք էր և պտղաւէտ. նորա ամեն բան
իրանը էին մշակում, վարում ցանում էին, այ-
դիներ էին տնկում, փեթակներ և անասուններ
էին պահում. հարուստ ու աղքատ, տէր և ըստ-
րուկ, չկար նոցա մէջ, այլ բոլորն էլ ապրում
էին հաւասար. Յետոյ յոյները սկսեցին պատե-
րազմել և նեղացնել հարսան ազգերին. պատե-
րազմի ժամանակ յափշտակում էին աւարը՝ ոս-
կի, արծաթ, ամենայն իրեղիններ, անասուն-
ներին և մարդկանց գերի էին տանում ու ըս-
տրկացնում. պատերազմներից յոյները սկսեցին
հարստանալ և նոցա կեանքն էլ ապականուեց.
ով աւելի քաջ էր, նա զինուսրական գործով
էր պարապում, ով աւելի խելացի էր, նա վար-
չութեան մէջ էր մտնում և ծառայում, ով ա-

ւելի ճարպիկ էր, նա առևտրով էր պարապում.
իսկ մշակութիւնից, յոյները բոլորովին յետմաշ-
ցին և նոցանից ոչ ոք չէր աշխատում:

Սոկրատէսի ժամանակ, Աթենացւոց երկ-
րում ստրուկները աւելի շատ էին, բան թէ
տէրերը. տէրերը հարիւր հազար էին, իսկ ըստ-
րուկները երեք հարիւր յիսուն հազար. ամեն
աշխատանք ստրուկն էր անում, իսկ տէրերը
ամօթ էին համարում մի որեւէ արհեստով պա-
րապելու. տէրերի բոլոր հոգսն այն էր, թէ
ինչպէս առևտրի, պատերազմի, կամ իշխա-
նութեան մէջ, աւելի շատ փող վաստակեն և
գնեն ուժեղ ու հմուտ ստրուկներ, ստրկուհի-
ներն ապրեն իրանց բաւականութեան համար:

Այդպէս ապրում էին յոյները, փափկու-
թեան մէջ և նոցանից ոչ մէկը չէր մտածում
ապրել ճշմարտութեամբ, օգնել եպրօրը, խղճալ
ստրուկի վերայ և ծառայելուրիշին, այլ բոլորը
միայն մտածում էին մի բան, թէ ինչպէս ըս-
տրկացնեն ուրիշներին, իրանց օգտի համար:

Տեսաւ Սոկրատէսը, որ ժողովուրդը մոլո-
րուել է, և ինքն իրան թշուառացնում է, դուրս
եկաւ նա հրապարակ, խօսեց նոցա այն, ինչ
որ ձայնն իրան ասել էր՝ թէ նոցա կեանքը
վատ է և թէ այդպէս չպէտք է ապրել:

Բ.

Ի՞նչՊէս Պէտք է ԱՊԵԼ:

Մէկ անգամ Սոկրատէսը հրապարակի վե-
րայ պատահեց մի երիտասարդ և հարուստ պա-
րոնի, որի անունն էր Արիստոն: Նա յիմար և
չար մարդ չէր, բայց ապրում էր, ինչպէս բո-
լոր հարուստ յոյները, միայն իւր բաւականու-
թեան համար. այդպէս, Սոկրատէսը նորան պա-
տահելով, սկսեց հետք խօսել. մօտեցաւ ժողո-
վուրդը և լսում էր. Սոկրատէսն ասաց՝

— Բարե Արիստոն, այս մեր ես, վաղուց է
չես երեսում. երեխ դու մի գործով ես զրադուած,
որ ժամանակ չունես մեղ նման թափառելու:

— Ո՛չ, պատասխանեց Արիստոնը. ես ոչ մի
գործ չունեմ. ինչո՞ւ համար աշխատեմ, ի՞նչ հարկ
կայ. ինձ համար այսպէս լաւ է. փառք աս-
տուածներին, ես աղքատ չեմ. ի՞նչն է ինձ ըս-
տիպում աշխատել, կամ հոգս քաշել. այ, եթէ
ինձ իշխան ընտրէին, գուցէ պատուի համար
գնայի. բայց այդ էլ գժուար է. մի որեւէ ծա-
ռայութիւն յանձգ առնես, դարձեալ հոգս, ու-
զենաս, չուզենաս, գնա լսիր, խօսիր, կամ զը-
րիր. այդ ամենը աւելորդ գլխացաւանք են.
ինչո՞ւ համար ինձ նեղացնեմ. փող ունեմ, ըստ-

բուկներ ունեմ, ինչ որ մտածեմ, կունենամ.
ուրախ ապրում եմ, ինձ էլ ի՞նչ է պէտք:

— Այդ ուղիղ է, որ քեզ նեղացնելու հարկաւորութիւն չունես, ասաց Սոկրատէսը. միայն միթէ լաւ կըլինի, եթէ դու ամբողջ կեանքդ այդպէս անցնես:

— Ի՞նչով վատ է, ամբողջ կեանքն անցնել ուրախութեան մէջ, գորանից էլ լաւ բան կայ:

— Այդ է որ, լաւ կըլինի, ասաց Սոկրատէսը, միշտ այն բոլորը լաւ չէ, ինչ որ մեզ լաւ է երեսում. արդեօք դու լե՞լ ես չերկուլէսի մասին:

— Ո՞վ չդիտէ չերկուլէսի մասին, թէ նա ինչպէս քաջ էր, ինչպէս փառաւոր գործեր է կատարել և ինչպէս փառքի է արժանացել, ասաց Արիստոնը:

— Իսկ դու լե՞լ ես, թէ ինչպէս նա ընտրեց իւր կեանքի ճանապարհը:

— Այդ շեմ լաել:

— Չեմ լոել, ուրեմն ուզմում ես, ես քեզ պատմեմ, ճարցրեց Սոկրատէսը:

— Պատմիր Սոկրատէս, ասացին և միւները. նա սկսեց պատմել՝

Երբ չերկուլէսը մեծացաւ, մտածում էր, թէ ինչպիսի կեանք ընտրէ իրան ճամար և սկսեց նա թափառել ու մտածել, թէ ինչպէս

ապրի: Այդպէս, նա գնում, գնում, մտնում է մի հեռու դաշտ, տեսնում է, որ դաշտումը, երկու կին դէպի իրան են գալիս. զարմանում է չերկուլէս և ինքը գնում է նոցա առաջ. տեսնում է նոցանից մէկը ոչ մեծ է, ոչ փոքր, ոչ հաստ է, ոչ բարակ և ոչ էլ զարդարուած է, այլ հասարակ և աշքի ընկնող չէ, գնում է հաւասար, հանդարտ բայլերով, առանց շտապելու. իսկ միւսը բարձրահասակ էր, հաստ, շրեղ հագուստով և երեսը քսուած էր սպիտակ ու կարմիր գեղերով: Առաջինը գնում էր ուզիդ, առանց այս ու այն կողմը նայելու, իսկ երկրորդը բոլոր ժամանակ ծռմովում էր, գեղեցիկանում էր և իւր ստուերին էր նայում. ահա նորա սկսեցին մօտենալ չերկուլէսին. շրեղը թռաւ և անցաւ ուզգակի չերկուլէսի առաջ:

— Ես գիտեմ, որ դու մտածում ես կեանքի մասին, թէ ի՞նչ ճանապարհ ընտրես քեզ համար. ահա, ես դուրս եկայ, քեզ ցոյց տալու իս ամենալաւ ճանապարհ՝ եթէ ինձ հետ գաս, քեզ ճամար ամեն բան հեշտ և ուրախ կըլինի. դու չես ունենայ ոչ աշխատանք, ոչ հոգս, ոչ ցաւ, ոչ էլ տրտմութիւն իմ ճանապարհիս վերայ, ուրախութիւնը անպակաս կըլինի. մի ուրախութիւնից կանցնես միւսը. հոգսդ միայն

այն կըլինի, որ ընտրես, թէ որ կերակուր աւելի համով է, որ գինին աւելի քաղցր, որ անկողինը աւելի փափուկ և որ բաւականութիւնն աւելի լաւ է. իսկ աշխատանքդ միայն այն կըլինի, որ հրամայես այն, ինչ որ մտքիցդ անցնի և բոլոր հրամաններդ ուրիշները կըկատարեն:

Լաւ երևեցաւ չերքուլէսին հաստ կնոջ խոստմոնքը և որպէս զի միտքը պահէ նորան, հարցրեց անունը:

— Իմ իսկական անունս, ասաց կինը. բաղդ է. միայն նախանձողները ինձ անուանում են շռայլութիւն, այդպէս են ինձ բարկացնում. իսկ իմ անունս բաղդ է:

Համեստ կինը կանգնած էր հանդարտ, մինչեւ որ շռայլը խօսում էր, բայց երբ նա վերջացրեց, համեստը նոյնպէս խօսեց՝

— Ամմից առաջ կասեմ իմ անունս. ինձ անուանում են արդարութիւն և ես ուրիշ անուն չունեմ. ես քեզ չեմ զրաւի հրապոյրներով, ինչպէս ահա սա, այլ քեզ ուղիղը կասեմ, թէ ինչ է ամեն մի մարդու երջանկութիւնը և դու կըտեսնես, որ միայն ինձ հետ կըդանես երջանկութիւն։ Դու ինքդ լաւ գիտես, որ երկիրը պտուղ տալու համար, պէտք է նորա վերայ աշխատել. ուզում ես անասուն-

ներ ունենալ, պէտք է ուրեմն նորան ինսամես. լաւ տուն ունենալու համար, պէտք է քարեր տաշես. ուզում ես որ մարդիկ քեզ յարգեն՝ պէտք է նոցա համար աշխատես, որպէս զի աստուածները քեզ սիրեն, պէտք է նոցա կամքը կատարես. իսկ նոցա կամքն այն է, որ քո աշխատանքով վճարես միւսների աշխատանքը, այդ ճանապարհով ես քեզ կըտանեմ և միայն այլտեղ է երջանկութիւնը։

Դեռ չէր վերջացրել համեստը, երբ շռայլը նորից առաջ եկաւ:

— Տեսնում ես, չերկուլէս, ասում է նա, թէ սա ինչպիսի դժուար ճանապարհով ուզում է քեզ տանել. աշխատանք, աշխատանք և միայն աշխատանք նա խոստանում է քեզ. իսկ ուրախութիւն կըլինի թէ չէ, այդ հարց է. աւելի լաւ չի լինիլ ինձ հետ գաս. ինձ հետ աշխատանք չկայ, այլ առաջին քայլերից, միայն բաղցրութիւն կըփայելես. համով կուտես, բաղցր կըխմես ու փափուկ կըքնես։ Գնանք ինձ հետ, ասաց շռայլը և ուզեց չերկուլէսի ձեռից բռնել:

— Սպասիր, ասայ համեստը, դու ասում ես բաղցր ուտել ու խմել և կարծում ես, որ այդ բարիք է. այն ինչ, դու ինքդ ուտել ու խմել չգիտես. դու ուտում ու խմում ես, ա-

ուանց ուզենալու, միայն ձանձրութիւնից և ամենահպուագիւտ կերակուրներն ու թանգագին գինիները չես կարող բերանդ առնել։ Դու նորան խոստանում ես հանգիստ ընել. իսկ դու ինքդ ընել չես կարող. քնելու համար դու ձրգում ես տակդ փափուկ անկողիններ, գլխիդ տակը բարձեր, բայց նոցա վերայ էլ չես կարողանում ընել, որովհետև միայն ձանձրութիւնից ես պառկում ընելու։ Աշխատանքից յետոյ միայն կարող ես լաւ ընել, բայց քեզ ոչ մի բանից հանգստանալ պէտք չէ։ Ձանաշում եմ ես քեզ, գիտեմ և այն անբախտներին, որոնց դու կործանել ես դատարկ և բաղցը կեանքի հրապոյրներով. միթէ քչերն են հիմայ այն բանի մասին լաց լինում, որ կորցրել են քեզ հետ, աննպատակ, իրանց երիտասարդութեան տարիները, հէնց այդ պատճառով քեզ հալածում են աղնիւ մարդիկն ու անուանում են քեզ շոյլութիւն ու գեղխութիւն. իսկ ես, ոչ ոքի չեմ խարել. բոլոր ինձ հետեւողները, գեռերիտասարդութեան ժամանակ ամրացել են հոգով և մարմնով. նոքա գտել են իմ ճանապարհի վերայ աւելի ուրախութիւն, բան թէ վիշտ. նոցա բոլորին սիրում և յարգում են մարդիկ, ամենքը ուրախութեամբ յիշում են աշխատանքով անցուցած կեանքը և հանգիստ

սպասում են մահուան։ Քեզանից գանգատում
են, իսկ ինձ երբէք մեղադրող չէ եղել խարե-
բայութեան համար. բոլորը յարգում են ինձ
ու անուանում են միայն մի անունով՝ «արդա-
րութիմ»։ ահա թէ ինչ կեանքի համար ես
քեզ կանչում եմ, չերկուլէս։

Ել երկար շմտածեց Հերկովլէսը և գնաց
արդարութեան ետևից. արդարութեամբ ապ-
րեցաւ կեանիքի մէջ, աշխատեց մարդկանց հա-
մար, զոհացրեց թէ նոցա ու թէ աստուած-
ներին և իրան համար Ել գտաւ երջանկութիւն։

Վերջացրեց Սոկրատէսը և ասաց Արիստոնին՝ «մտածիլ զու էլ, Արիստոն, թէ այդ երկուսից հրի հետ պէտք է գնաս, շռայլութեան, թէ արդարութեան, վճռիր, քանի դեռ ժամանակ կայ, որպէս զի ծերութեանդ ժամանակ, չզղջաս ըստ յիմարութեան վերայ և շը մեռնես առանց բաւականութիւն տալու ոչ բեկ, ոչ մարդկանց և ոչ էլ Աստծուն»:

Բ'ՆՉՊԵՍ ՊԵՏք Է ԿԱՌԱՎԱՐԵԼ ԺՈՂՈՎՐԴԻՆ

Սովորատեսակ պահանջման վեց, որ մի հարուստ մատրի, լիքավոր մատուցման, սահմատում է

A circular blue ink stamp. The outer ring contains the Armenian text "ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՇՏՈՒՄ ԳՐԱԴԱՐԱՆ" (State Library of Armenia). The inner circle contains the date "7/ XI - 1922".

կառավարիչ լինել։ Սոկրատէսը գիտէր, որ նա
անփորձ և անհոգ մարդ է և ուզեցաւ յանդի-
մանել նորան։

Մէկ անգամ Սոկրատէսը պատահեց նո-
րան քաղաքային հրապարակի վերայ։ Գլավկոնը
կանգնած էր ժողովրդի մէջ, որը խօսում էր
նորա հետ յարգանքով։ բոլորը սպասում էին,
որ նա շուտով կառավարիչ կըլինի և այն ժա-
մանակ ամենքը կարօտ կըլինեն նորան։ Գլավ-
կոնը սպասում էր, որ իրան կընտրեն և հպար-
տանում էր ժողովրդի առաջ, այդ ժամանակ
մօտեցաւ և Սոկրատէսը։

— Բարե Գլավկոն, ասաց նա. ևս լսեցի,
որ դու պէտք է կառավարիչ լինես։

— Այն, յուսով եմ, որ այդպէս է. պատաս-
խանեց Գլավկոնը։

— Ինչո՞ւ չէ, լաւ պաշտօն է. այն ժամա-
նակ շատ բան քո իրաւունքի տակ կըլինի. կա-
րող ես շատ մարդկանց բարութիւն անել և
անունդ շատ տեղ յայտնի կըլինի։

— Այն, և ինչո՞ւ չէ, ես միթէ չեմ կարող
լաւ կառավարիչ լինել։

— Լաւ կառավարիչն ու լաւ անուն ունե-
ցողը նա է, ասաց Սոկրատէսը, ով որ իւր ժո-
ղովրդի համար շատ օգուտ կըրերէ, այդպէս չէ։

— Անշուշտ պատասխանեց Գլավկոնը։

— Ուրեմն, խնդրեմ, մի ծածկիր մեզա-
նից, պատմիր, թէ ինչ ես մտածում, ինչ օ-
գուտ պէտք է տաս ժողովրդին. ինչից կսկսես

Գլավկոնը շփոթուեց և խկոյն չպատաս-
խանեց. Նա չէր իմանում, թէ ինչ ասէր. մին-
չև նա մտածում էր, Սոկրատէսն ասաց՝

— Ինչո՞ւ մտածմունքի մէջ ընկար. միթէ
զմուար է հասկանալ թէ ինչով կարելի է ժո-
ղովրդին օգուտ բերել. չէ որ ժողովուրդն էլ
այն տեսակ մարդիկ են, ինչպէս մենք ամենքս.
Եթէ դու քո ընկերին ուզենաս բարութիւն ա-
նել, չէ որ առաջին դործդ կըլինի նորա հա-
րստութիւնն աւելացնել։

— Անշուշտ, պատասխանեց Գլավկոնը։

— Ուրեմն, միևնոյն բանն է և ժողովուր-
դը. ասաց Սոկրատէսը. ժողովրդին բարութիւն
անել, նշանակում է ամենքին հարստացնել.
այնպէս չէ։

— Ի հարկէ, այդպէս է, ասաց Գլավկոնը։

— Եսկ ինչպէս անել, որ բոլոր ժողովուրդը
աւելի հարուստ լինի, հարցրեց Սոկրատէսը.
Ես այնպէս եմ կարծում, որ նա ունենայ
ւելի մուտք, քան թէ ծախս, այնպէս չէ։

— Ես կարծեմ, պատասխանեց Գլավկոնը։

— Ուրեմն, ասա ինձ, Գլավկոն, հիմայ
մրտեղից են ժողովրդի արդիւնքները և ինչքան

են. դու երեխ արդէն այդ բոլորը գիտես:

— Ոչ, չգիտեմ, դեռ այդ մասին չեմ մտածել, ասաց Գլավկոնը:

— Այդ մասին չես մտածել, ասաց Սոկրատէսը, բայց երեխ արդէն գիտես, թէ ի՞նչքան ծախս է պէտք զանազան հարկաւորութեանց համար և եթէ հիմայ աւելորդ ծախսեր կան, երեխ դու մտածել ես պակսեցնել:

— Ոչ, ասաց Գլավկոնը, այդ հարցին էլ հիմայ պատասխանել չեմ կարող, որովհետեւ դեռ չեմ մտածել այդ մասին:

— Այդ մասին էլ դեռ չես մտածել. կրկնեց Սոկրատէսը. բայց ոչինչ, դեռ ժամանակ ունես. երեխ դու մտածել ես, թէ ի՞նչպէս հարստացնես ժողովրդին. քո կարծիքով, ի՞նչով կարող ես հարստացնել նորան:

— Հարստացնել ժողովրդին, ասաց Գլավկոնը, իմ կարծիքով, ամենից լաւ է պատերազմով. նուածել ուրիշ ազգերի, խլել նոցանից բոլոր հարստութիւնը և բաժանել:

— Այդ ուղիղ է, ասաց Սոկրատէսը. այդ միջոցով հեշտ է հարստացնել ժողովրդին. բայց պատահում է, որ չես յաղթում ուրիշ ազգերի, այլ միայն զուր տեղը մարդիկ և փող ես կորցնում. չէ որ այն ժամանակ ոչ թէ կհարստանայ, այլ կաղրատանայ:

— Այդ այդպէս է, ասաց Գլավկոնը. բայց պատերազմ պէտք է սկսել միայն այն ժամանակ, երբ հաստատ գիտենաս, որ կըյաղթես և ոչ թէ կյաղթուիս:

— Ուրեմն, պատերազմ սկսելու համար, պէտք է ճիշտը իմանալ, բո ժողովրդի և թշնամու ոյժը, ասաց Սոկրատէսը:

— Անշուշտ պէտք է իմանալ, ասաց Գլավկոնը:

— Ուրեմն, ասա Գլավկոն, մենք ինչ զինուրական ոյժեր ունենք պատերազմի համար պատրաստ և ի՞նչ ոյժեր ունի այն թշնամին, որի հետ դու ուզում ես պատերազմել:

— Ճիշտը չեմ կարող ասել. ասաց Գլավկոնը. բերանացի չէ էլ կարելի այդ յիշել:

— Երեխ գրած կունենաս, խնդրեմ բեր, մենք կկարգանք ու կըհաշուենք, ասաց Սոկրատէսը.

— Ոչ, ես գրած չունեմ, պատասխանեց Գլավկոնը և թշնամու զօրքն էլ հաշուել չի լինիլ:

— Ափսոս, ասաց Սոկրատէսը, որովհետեւ եթէ չէ կարելի հաշուել թշնամունք, ուրեմն առաջուց չենք կարող իմանալ, կըյաղթենք, թէ կըյաղթուենք. ուրեմն զուրս է գալիս, որ բոլնտրած միջոցը, ժողովրդին հարստացնելու

համար շատ յուսալի բան չէ. օգուտ կստանաս թէ չէ յայտնի չէ. անշուշտ շատ մարդկանց կթշուառացնես և փոխանակ հարստացնելու, կաղքատացնես. Ուրեմն, այդ թողնենք. ասա, մեզ էլի մի բան, Գլավկոն, ասաց Սոկրատէսը. թէ ինչքան հաց է պէտք, ժողովրդին կերակրելու համար. ինչպիսի հունձ ունէինք մենք այս տարի և մինչև նորի դուրս գալը մեր հացը ամէնին բաւական կլինի. դուերեկի մտածել ես այդ մասին:

— Ոչ, ես դեռ չեմ տեղեկացել այդ մասին, պատասխանեց Գլավկոնը:

Լոեց Սոկրատէսը. լոեցին և միւսները. այն ժամանակ Գլավկոնն ասաց՝

— Դու բոլորը ուզում ես իմանալ, Սոկրատէսը. իսկ եթէ ամեն բան մտածենք ու հաշուենք այնպէս, ինչպէս դու ես հարցնում, այն ժամանակ ժողովրդին կառավարելը շատ դժուար կըլինի:

— Իսկ դու կարծում էիր հեշտ է, ասաց Սոկրատէսը. վերջին հարցս եմ քեզ տալիս. լսել եմ, որ սկսել ես օգնել հօրեղբօրդ նորա տնական գործերում, իսկ յետոյ թողել ես, ինչու այդպէս եղաւ:

— Ինձ դժուար էր, պատասխանեց Գլավ-

կոնը. կառավարութիւնը մեծ էր և հօրեղբայրութիւնը:

— Ահա, տեսնում ես, դու մէկ տուն չկարողացար կառավարել, իսկ յանձդ ես առնում բոլոր ժողովրդի կառավարութիւնը. ամեն գործի ձեռք զարնել կարելի է, բայց միայն նորան կյացողուի, ով որ այդ լաւ է հասկանում, նայիր, որ փոխանակ փառքի ու պատուի, անբախտութիւն ձեռք չբերես, գնա, ամեն բան առաջ լաւ իմացիր, ինչ որ ես քեզ հարցը և ապա արդէն մտածէ կառավարութեան մասին:

Գլավկոնը լուռ հեռացաւ Սոկրատէսի մտից և էլ չմտածեց կառավարչի պաշտօն ըստանալու մասին:

¶.

Ո՞Վ ԱՒԵԼԻ ԼԱԲ Է— ՍՏՐՈՒԿԵ, ԹԵ ՏԵՐԸ

Մէկ անդամ Սոկրատէսի մօտ եկաւ նորա հարևան Արիստարիսը և սկսեց գանդատուիլ իւր անբախտութեան վերայ:

— Հնարք չեմ գտնում, թէ ինչ անեմ. հարուստ էի, ասաց. վաճառականութիւն էի անում, յետոյ առևտուրս յաջող չգնաց, մնանկացայ. այդ ժամանակ հակառակի պէս պա-

տերազմ կար. այնտեղ ազգականներս սպանուեցին. ստիպուեցայ ինձ մօտ պահել նոցայրի կանանց և որբերին. հիմայ ինձ մօտ կան տասն և չորս հոգի. հիշտ է բոլորին կերակրելը. Անբախտութիւնը անբախտութեան ետիւց, այնպէս որ չգիտեմ, թէ ինչ անեմ:

— Խղճում եմ քեզ, բարեկամ, ասաց Սոկրատէսը. ինչպէս ես մտածում հիմայ գործին օդնել:

— Ուզում էի պարտք առնել, նորից առևտուր սկսել, բայց չեն տալիս, որովհետեւ պիտեն, որ գործերս վատ են:

Գլուխը շարժեց Սոկրատէսը և ասաց՝

— Ասածդ ուղիղ է, տասն և չորս հոգի կերակրելու համար պէտք է պաշար ունենալ. չէ որ քո հարևանդ քսան հոգուց աւել ունի, բայց բոլորն էլ կուշտ են և գեռ փող էլ են վաստակում, ասաց Սոկրատէսը:

— Այ, համեմատեցիր, ասաց Արիստարխը. հարեանս ինքը մենակ է, և տասն և ինը ստրուկ ունի, որոնք աւելի աշխատում են, քան թէ ուտում. իսկ ես ունիմ տասն և չորս ազատ յոյներ:

— Իսկ ազատ յոյները ի՞նչով են զանազանւում ստրուկներից, ասաց Սոկրատէսը. չէ որ նորա աւելի լաւ են ստրուկներից:

— Ի հարկէ, ազատ յոյները աւելի լաւ են: Խօսքով, յիրաւի գուրս է գալիս, որ նոքա աւելի լաւ են, իսկ գործով այդպէս չէ: Սսում ես հարևանիդ մօտ աւելի լաւ է, որովհետեւ այնտեղ ստրուկներ կան, իսկ քեզ մօտ վատ է, որովհետեւ ստրուկներ չեն, այլ ազատ յոյներ են. երեսում է, որ ստրուկներն աշխատել կարող են, իսկ յոյները չէ:

— Եթէ իմբններիս առեմ, նորա ևս կարսղ են աշխատել, ասաց Արիստարխը, բայց միթէ ես կարող եմ նոցա ստիպել. չէ որ նորա բարձրը ցեղից են և ինձ ազգական են. դորանով կվիրաւորեմ նոցա. կսկսուեն մեղադրանքներ, անբաւականութիւններ, այդպէս կարելի չէ:

— Իսկ հիմայ անբաւականութիւններ չկան, բոլորդ համաձայն էք ապրում, հարցըց Սոկրատէսը:

— Ի՞նչ համաձայնութիւն, պատասխանեց Արիստարխը, միայն մեղադրանքներ ու կրւներ են լսում:

— Այ, թէ այդպէս, ասաց Սոկրատէսը. առանց աշխատանքի էլ ձեր մէջ համաձայնութիւն չկայ և ոչինչ էլ չունէք կերակրուելու. չէ որ, ազգականներիդ մեծութիւնն ու ազնուականութիւնը չեն կերակրիլ և համաձայնութիւն չեն տալ. ուրիմն ուղիւմ ես, ահա

այս անել տալ նոցա իրենց ոյժերին համեմատ
մի որևէ գործ. աւելի լաւ չի լինիլ, երբ ըս-
կսեն աշխատել:

— Ես այդպէս կանէի, ասաց Արխտարխս,
բայց այդ նոցա գուր չի դայ և գուցէ քաղա-
քումն էլ ինձ բամբասեն:

— Իսկ հիմայ չե՞ն բամբասում, հարցրեց
Սոկրատէսը:

— Հիմայ էլ կան բարի մարդիկ, որոնք
մեղադրում են ազրատութեանս համար. մեղա-
դրում են, բայց փող չեն տալիս, որ գործերս
ուղղեմ:

— Այդ է բանը, ասաց Սոկրատէսը, ամեն
բամբասանք լսել չի լինի. ապա աշխատիր
նոցա գործի դնել, կարելի է դրութիւնդ աւելի
լաւանայ:

Լսեց Արխտարխը Սոկրատէսին: Կէս տա-
րուց յետոյ Սոկրատէսը պատահեց նորան և
հարցրեց՝ թէ ի՞նչպէս է ապրում, Արխտարխը
պատասխանեց՝

— Լաւ եմ ապրում և քեզանից միշտ չնոր-
հակալ եմ. այն ժամանակ քեզ լսեցի, հիմայ
գործերս բոլորովին ուղղուել են. մէկ մարդ
ինձ հաւատաց, պարտքով առայ նորա բուրդը,
իմ տնեցիքս այդ բուրդը մանեցին, գործեցին
մահուդ, յետոյ կարեցին տղամարդկանց և կա-

նանց համար զգեստներ, գորա վաճառեցինք
և ոչ թէ միայն բուրդի փողը զուրս եկաւ,
այլև օգուտ ստացանք: Այդ ժամանակուանից
սկսեցինք այդ արհեստով պարապել: Հիմայ
մենք բոլորս էլ կուշտ ենք, չենք կուռում և
փող էլ ենք վաստակում:

— Իսկ մարդիկ ի՞նչ են ասում, հարցրեց
Սոկրատէսը:

— Մարդիկ բան չեն ասում, պատասխա-
նեց Արխտարխը և ծիծակեց:

Մէկ անգամ տեսաւ Սոկրատէսը, որ հրա-
պարակի վրայ պառկել է մի երիտասարդ պա-
րոն և հոգհարով զովացնում է իրան:

— Այդ ի՞նչից ես այդպէս յոգնել, ասաց
նորան Սոկրատէսը:

— Ի՞նչպէս շյոգնեմ, ես այսօր գիւղից
տասը վերստ ոտով եմ եկել:

— Ի՞նչու այդքան շատ ես յոգնել, գուցէ մի
ծանր բեռ ունէիր, պարոնը նեղացաւ:

— Ինչու ես բեռ քաշեմ, գորա համար ըստ-
րուկ կայ. նա բերեց, ի՞նչ որ ունէի:

— Իսկ նա յոգնեց թէ ոչ:

— Նորան ի՞նչ կլինի որ, առողջ է, ամ-
բողջ ճանապարհը երգելով էր գալիս:

— Ափսոսում եմ քեզ, ասաց Սոկրատէսը.
դուրս է գալիս, որ քո ստրուկը քեզ էլ, ամեն
մի մարդու էլ, իրան էլ ծառայել կարող է,
իսկ դու, ոչ ուրիշներին; և ոչ էլ մինչև ան-
գամ քեզ ծառայել չես կարող.

Մէկ ուրիշ անգամ էլ, տեսաւ Սոկրատէսը,
որ մի տէր մտրակով ծեծում էր ստրուկին:

— Ինչո՞ւ համար դու նորան այդպէս խիստ
ծեծում ես, հարցրեց Սոկրատէսը;

— Ի՞նչպէս չծեծեմ սորան. բկլիկ է, ծոյլ
է, միայն մտածում է քնելու, ուրախութեան և
աւելի համեղ բաներ ուտելու մասին. սորան
հարիւր անգամ մտրակելն էլ գեռ քիչ է:

Սոկրատէսը կանչեց տիրոջը մի կոզմ և
ասաց՝

— Իսկ դու ի՞նչի մասին ես մտածում,
բացի այն թէ որքան կարելի է փափուկ ան-
կողնի մէջ քնես, համով ուտես և ուրախու-
թին անես:

Տէրը ոչինչ չպատասխանեց:

— Ուրեմն, եթէ դու միայն այդ մասին
ես մտածում, քեզ ի՞նչքան պէտք է մտրակել
այդ նոյն բանի համար, որ դու պատժում ես

ստրուկիդ, չէ որ նա բեղանից է օրինակ
վերցնում:

Նեղացաւ տէրը և հեռացաւ Սոկրատէսի
մօտից:

Ե.

Ի՞նչպէս Պէտք է ԱՊՐԵԼ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ

Երբ Սոկրատէսը թողեց բարտաշութիւնը,
որպէսզի զնայ հրապարակ ժողովրդին ուսու-
ցանելու, նորա կինը նեղացաւ և շարունակ մը-
տածում էր, որ իրանց մի վնաս կըհամնի:
Բայց երբ Սոկրատէսի մօտ սկսեց շատ ժողո-
վուրդ հաւաքուել, կինը միսիթարում էր ինքն
իրան և մտածում էր՝ «ուսման համար լաւ են
վարձատրում. ուսուցիչները ապրում են բաւա-
կանութեան մէջ, մենք էլ այդպէս կապրենք»:
Իսկ Սոկրատէսը այդպէս չէր մտածում. նա ա-
սում էր՝ «ուսման համար ես չեմ կարող վարձ
պննել. ես ուսուցանում եմ այն, ինչ որ ինձ
Աստծոյ ձայնն է ասում. սովորեցնում եմ ճշ-
մարտութիւն, դորա համար ես ինչպէս փող
վերցնեմ»: Թէև շատ մարդիկ հաւաքում էին
Սոկրատէսին լսելու, բայց նա ոչ մէկից փող
չէր առնում. իսկ ընտանիքը պահելու համար,

նա աշխատում էր իւր արհեստից այնքան, որ
բաւական էր լինում անհրաժեշտ բաների հա-
մար։ Սոկրատէսի կինն ամաչում էր իւր աղ-
քատ և ծանր կեանքի համար, ստէպ նա տըր-
տնջում էր, որ ամուսինը ժողովրդին սովորե-
ցնելու համար փող չէ վերցնում, երբեմն բանն
այնտեղն էր հասնում, որ նա լաց էր լինում,
մեղադրում ու կռւում էր իւր մարդու հետ։
Սոկրատէսի կինը, որի անունն էր Կսանտի-
պա, դիւրագրգիռ կին էր. երբ նա բարկանում
էր, ամեն բան պատում ու դէն էր ձգում,
ինչ որ ձեռքի տակն ընկնէր.

Նա բարկանում էր և երեխայոց վերայ,
բայց աւելի շատ Սոկրատէսի. իսկ վերջինս չէր
կռւում, այլ լռում էր, կամ համոզում նորան։

Մէկ անգամ նա կռւում է ու կռւում,
իսկ Սոկրատէսը բոլոր ժամանակ լուռ է. կը-
նոջն այդ ծանր է երեսում և չարութիւնից մի
մեծ ամանով կեղտոտ ջուր, Սոկրատէսի վերայ
է լցնում։

Այդպէս էլ պէտք էր, ասաց Սոկրատէ-
սը՝ ամպը գոռաց, իսկ նորանից յետոյ անձրե
եկաւ և նա անվրդով սկսեց սրբել իւր թըր-
ջուած շորերը։

Այդպէս անում էր Սոկրատէսը և նոյնն էլ
սովորեցնում էր իւր զաւակներին։ Մէկ անգամ

մեծ որդին կոպիտ պատասխանեց մօրը. Սոկ-
րատէսն ասաց որդուն՝
— Դու ի՞նչ ես մտածում այն մարդկանց
մասին, որոնք բարին չեն յիշում. այդպիսի-
ները լաւ են։

— Եթէ մարդիկ չեն ուզում բարութիւն
անել նոցա, որոնք իրանց լաւութիւնն են արել, ես
կարծեմ նորա ամենաանպիտան մարդիկն են և
այդպէս բոլորն էլ են կարծում։

— Դու լաւ դատեցիր, ասաց Սոկրատէսը։
Իսկ հիմայ, ասա ինձ, եթէ մէկը, մի ուրիշին,
որը ոյժ չունի, տանում է տեղից տեղ, կերա-
կրում է, հագցնում է, կարկատում է, քնա-
ցնում է, վեր է կացնում, հիւանդ ժամանակ
նայում է և նորա չարութիւնը սիրով է տա-
նում. ի՞նչ ես կարծում, այդպիսին բարութիւն
արեց միւսին։

— Մեծ բարութիւն արեց, ասաց որդին։

— Ուրեմն տեսնեմ ես, քո մայրը զորա-
նից աւելի շատ քեզ համար արել է. նա քեզ
ման է ածել, կերակրել է, գիշերները չէ ընել.
առանց գիտնալու, թէ երբ և իցէ կստանայ
քեզանից չնորհակալութիւն, կամ օգնութիւն։
իսկ զու փոխարէն ի՞նչ ես տալիս նորան և
արգեօր լարգնում ես նորան, ինչպէս վայել է
ազնիւ, երիտասարդ մարդուն։

Ճփոթուեց որդին, բայց չուզեց հնագանդել և սկսեց արդարանալ:

—Ես նորան կյարգէի, եթէ ուրիշ տեսակ կին լինէր, թէ չէ, միշտ գոռում և նեղացնում է մի շնչին բանի համար, ահա և ես չեմ համբերում:

—Իսկ դու երբ փորր էիր, միթէ իրաւացի էիր գոռում. բայց նա համբերում, սիրում և խնամում էր քեզ. այդպէս ել դու պէտք է անես. ասաց Սոկրատէսը:

Զ.

ԽՆՉՈՒ ՍՈԿՐԱՏԷՍԻՆ ՀԱՐԿԱՆՈՐ 2ԵՐ Ո2 ԹԱՆԳԿԵՐԱԿՈՒՐ ԵՒ Ո2 ԷԼ ԹԱՆԳ ՀԱԳՈՒՍՏ.

Մէկ անգամ Սոկրատէսի մօտ եկաւ մի ուսուցիչ, տեսնելու նորա կեանքը և ասաց,

—Հիմայ ես տեսայ քո կեանքը. Սոկրատէս, դու ուտում ես ամենավարդ կերակուր, հագուստի նոյնալիս շատ հասարակ է և առանց փոխելու նոյնը հագնում ես ձմեռ և ամառ. իսկ կօշիկ բոլորովին չունես. ուրեմն ինչնու համար է քո իմաստութիւնդ, եթէ դա ծանրացնում է քո կեանքը:

—Իսկ դու լսել ես, որ ես երբ և իցէ

գանգատուած լինեմ իմ կեանքից, ասաց Սոկրատէսը:

—Ոչ, ես չեմ լսել, բայց կենցաղավարութիւնդ լաւ չէ, համեղ ուտելիք ու խմելիք չունես և չգիտես, թէ ինչ է բաւականութիւնը:

—Ոչ, ասաց Սոկրատէսը. ոչ որ այդպէս համով չէ ուտում ու խմում. իսկ թէ ինչու, ես քեզ իսկոյն կտսեմ. Դու ինքդ գիտես, որ երբ քաղցած ես լինում, ամենահասարակ կերակուրը թանկապնից համով կերևի. ահա, ես էլ այդպէս եմ անում. չեմ ուտում, մինչև որ չքաղցեմ. չեմ խմում, մինչև չուզենամ, ուրեմն ինձ ինչ հարկաւոր է թանգ ուտելիք և թանգ խմիչը. իսկ հագուստի մասին քեզ կտսեմ, որ ուրիշ տեսակը ինձ պէտք չէ. դու գիտես, որ մարդիկ երկու հագուստ ունեն՝ մէկը ձմռան, միւսը ամառուան, որովհետեւ նորա ձմռանով ամառը կը շոգին, իսկ ամառուանով ձմեռը կը մրսեն, իսկ ես այնպէս եմ սովորցրել իմ մարմինս, աստց Սոկրատէսը, որ ամառը չեմ շոգում, իսկ ձմեռը չեմ մրսում. շոգին էլ, ցրտին էլ, ուր որ հարկաւոր է, ես գնում եմ նոյն հալաւով, ուրեմն ինձ ինչ հարկաւոր է ուրիշ շոր ունենալ:

—Ասենք, թէ դու քեզ այդպէս ես սովո-

րեցրել, ասաց ուսուցիչը, բայց ինչո՞ւ միւս
մարդիկն էլ քեզ նման ապրեն:

— Սոկրատէսը ասաց՝ այ լսիր. երկուսիս
մօտ էլ գալիս է մի կարօտեալ մարդ և ա-
սում է՝ օգնիր ինձ. Մեղանից որը հեշտու-
թեամբ կարող կըլինի օգնել նորան, ես, թէ
դու. դու կմտածես՝ ուրախ կըլինէի օգնել,
բայց ինձ շատ է պէտք. մի բան կտայի նո-
րան, բայց յետոյ ես հարկաւորութիւն կզգամ.
կօգնէի նորան աշխատանքով, բայց ժամանակս
ափսոս է. և կասես ինքդ քեզ՝ ես այդ ժամա-
նակամիջոցին որչափ ինձ համար կաշխատէի:
Իսկ իմ բանը ուրիշ է. ես միշտ պատրաստ եմ
օգնելու մէկին, որովհետև ինձ շատ բան հար-
կաւոր չէ. ժամանակս էլ շեմ ափսոսում, որով-
հետև ես զդորա համար փող չեմ առնում, այլ
ուսուցանում եմ ձրի:

— Այդ այդպէս է, ասաց ուսուցիչը:

— Կամ թէ, կրկին ասաց Սոկրատէսը.—
Ասենք, դժուար ժամանակ եղաւ ժողովրդի հա-
մար. պէտք կլինի ընկերութեանը ծառայել.
դու կմտածես՝ երանի թէ ինձ ընտրէին ըն.
կերութեան անդամ, որովհետև այն ժամանակ
իմ գործերիս մէջ կլինասուէի: Իսկ ես, արգելք-
ներ չունիմ և ուրախութեամբ կերթամ ծառա-
յելու:

— Դու ճշմարիտ ես տսում, ասաց ուսու-
ցիչը, բայց դարձեալ, ես աւելի շուտ կհամա-
ձայնէի մեռնել, բան թէ քեզ պէս ապրել. դար-
մանում եմ, որ այդքան մարդ գալիս է քեզ
լսելու:

— Ասենք, լսողներ շատ են, բայց կատա-
րողներ քիչ են, ասաց Սոկրատէսը. մի քանիսը
լսում են, լսում և դարձեալ գնում են իրանց
առաջուան ճանապարհով. իսկ կան և այնպի-
սիները, որոնք ասլրում են իմ խորհրդովս և
ինձ նման, նորա էլ չեն գանգատում և ասում
են, որ առաջուանից աւելի բաղդաւոր են. մենք
գիտենք ձեր բաղտաւորութիւնը, որովհետև նո-
րանից հասել ենք մերինին, իսկ դուք չգիտէք,
թէ մեր երջանկութիւնն ինչումն է, որովհետև
նորան չէք փորձել:

Գիաց Սոկրատէսի մօտից ուսուցիչը և
ասաց ինքն իրան՝ հիմայ ես ինչնմտածեմ Սոկ-
րատէսի մասին. շատերը նորան համարում են
ցանցառ, մեղագրում են նորան, ծիծաղում են
նորա վերայ, իսկ հիմայ ինձ երեսում է, որ նա
լաւ արդարագատ մարդ է:

Ե.

ԵՂԲԱՑՐԱԿԱՆ ԿԵՍՆՔԻ ՄԱՍԻՆ

Մէկ անգամ Սոկրատէսն իմացաւ, որ մի հարուստ վաճառական բաժանուել է իւր հարազատ եղբօրից. պատահեց նա այդ վաճառականին և ասաց՝

— Զարմանում եմ թեղ վերայ. դու խելօք, տնտես մարդ ես, աշխատում ես շատ վաստակել, վարձում ես օգնականներ, որոնում ես գործիդ համար բնկելներ, իսկ հարազատ եղբօրիցդ բաժանուել ես:

— Եղբօր հետ ապրելը լաւ է. միայն թէ նայելով ինչպիսի եղբօր հետ. իմ եղբայրն ուրիշների համար լաւ է, իսկ ես նորանից ոչ մի լաւութիւն չտեսայ:

— Գուցէ դու ինքդ նորա հետ վատ ես վարում, հարցրեց Սոկրատէսը:

— Ես նորա հետ քաղցր կխօսեմ, ով որ ինձ հետ լաւ է վարում. նորան բարութիւն կանեմ, ով որ դէպի ինձ բարի է. իսկ լաւութիւն անել նորան, ով որ աշխատում է խօսքով և գործով ինձ վատութիւն անել, ես չեմ կարող և մտադիր էլ չեմ, պատասխանեց զայրացած վաճառականը:

— Ուրեմն, ասա ինձ, ասաց Սոկրատէսը. ինչպէս կվարուէիր այն մարդու հետ, եթէ ուղենայիր բարեկամանալ հետք:

— Ո՞րպէս կվարուէի, ասաց վաճառականը. ինչպէս բոլորը. ամեն բան կանէի, որ նա գոհ մնար, կիանչէի ինձ մօտ, կհիւրասիրէի կօգնէի ամեն մի գործում, փող կտայի եթէ հարկաւոր լինէր:

— Ուրեմն, դու այդ նայն արա և ըստ եղբօր համար, և կտեսնես, որ նա կփախուի դէպի թեզ:

— Եթէ ես առաջ նորան գլուխ տամ, ով կիտէ նա շուռ գայ. մարդկանց առաջ պէտք է ամօթով մնամ:

— Լաւ վարուելը երբէք ամօթ չէ, ասաց Սոկրատէսը և լաւ մարդիկ գորա համար չեն ծիծաղիլ: Իսկ եթէ այն ժամանակ էլ եղբայրդ եղբօր պէս շապրի թեզ հետ, դու կդիտենաս գոնէ որ ամեն բան արել ես, ինչ որ հարկաւոր է և որ մեղաւորը միայն նա է. բայց այդ չի լինի, որովհետեւ գիտեմ որ եղբայրդ վարուող է մարդկանց հետ: Սկսեցէք նոր եղբայրական կեանք և բաղտաւոր կլինէք, որովհետեւ այնպէս կապրէք, ինչպէս Աստուած հրամայել է:

— Երկու եղբայր, ասաց Սոկրատէսը՝ միհ-

նոյն է թէ մարդուս երկու աչքը, երկու ձեռքը, երկու ստրը: Աստուած մեզ երկու ձնորք է տուել մէկը միւսին օգնելու համար. նոյնպէս էլ, եղբայրը պէտք է օգնէ եղբօրը: Ի՞նչ կլինէր, եթէ մէկ ձեռքը խանգարէր միւսին. իսկ դու գիտե՞ս, որ ձեռքերը ոչ թէ խանգարում, այլ օդնում են միմեանց և եղբայրը եղբօրից աւելի շատ օգուտ ունի, քան թէ ձեռքը ձեռքից, աչքը աչքից, ոտքը ոտքից: Ձեռքերը և ոտքերը կարող են միմեանց օդնուլ միայն մօտիկից, իսկ եղբայրը եղբօրը կօգնէ, թէկուզ նա լինի աշխարհիս միւս ծայրում: Երկու աչքն էլ կարող են նայել միայն մի կողմ. իսկ եղբայրն օդնում է եղբօրն այնտեղ, որտեղ ամեն քան իւր աչքով չի կարող տեսնել: Աստուած հրամայել է եղբայրաբար աօրել ամեն մարդու հետ. իսկ որ իւր հարազատ եղբօր հետ լաւ չի վարւում, ուրեմն նա չէ կատարում Աստուծոյ օրէնքը:

¶.

ՄԱՐԴԻԿ ՄԻԱՍԻՆ Ի՞ՆՉՊԻՍ ՊԵՏՔ Է ԱՊԲԵՆ.

Սոկրատէսի խրատները գալիս էին լսելու, ոչ թէ միայն Այժէնքի բնակիչները, այլև ուրիշ բաղարներից և մինչեւ անդամ ուրիշ:

կրներից. գալիս էին լսելու Սոկրատէսին կամ նորա տանը կամ սպասում էին, որ նա գուրս գայ քաղաքային հրամարակի վերայ և այնտեղ շրջապատում էին նորան: Մէկ անդամ նորա մօտ հաւաքուեց շատ ժողովուրդ՝ ծեր և երիտասարդ, իրան բաղաքայիները և օտարականները. Սոկրատէսը ինքը երկար խօսել չէր սիրում, այլ հարցնում էր ուրիշներին. նա ասում էր թէ, ինչպէս որ մայրն օդնում է ուրիշներին աշխարհ գալու, այնպէս էլ ինքը ոչնչէ ուսուցանում, այլ միայն օդնում է, որ ուրիշները ինքն իրանց սովորեն: Այդպէս, այդ անդամն էլ Սոկրատէսը նստաւ նստարանի վերայ, իսկ նորա շուրջը տեղաւորուեց ժողովուրդը:

Սոկրատէսը ձեռքերը դրեց ծնկների վերայ, վլուխը քարշ արեց և մտածմունքի մէջ ընկաւ. բոլորը սպասում էին, թէ նա ի՞նչ կը հարցնէ: Վերջապէս նա գլուխը բարձրացրէց և ասաց՝

— Ասացէք ինձ, ինչու մարդիկ ապրում են միասին և ոչ առանձին-առանձին. նոցամէջ անհամաձայնութիւն, թշնամութիւն է լինում միշտ, իսկ եթէ ամեն մէկն առանձին ապրէր, ոչ որի հետ չէր կռուի, գուցէ և տելի լաւ լինէր:

Ահա և սկսեցին ամենքը խօսել: Մէկն

ասաց՝ մարդիկ միասին են ապրում, որովհետեւ
այդպէս ձեռնտու է, մէկ մարդուն աշխատելը
դժուար կը լինի, իսկ միասին աւելի շատ գործ
կանեն:

Երկրորդն ասաց՝ մենակ ապրելը սարսա-
փելի կը լինէր և պաշտպանուելը դժուար:

Երրորդն ասաց՝ մենակ մարդուն ապրելը
ձանձրալի կը լինէր. իսկ ուրիշների հետ աւելի
ուրախ է:

Տորրորդն ասաց՝ Աստուած էլ է կարգա-
դրել, որ մարդ մենակ չապրի:

— Ճշմարիտ է, ասաց Սոկրատէսը. բայց
մարդկանց ինչպէս ձեռնտու է ապրելը. խա-
ղաղութեան, թէ թշնամութեան մէջ:

— Ի հարկէ, խաղաղութեան մէջ, պա-
տասխանեցին բոլորը:

— Այս, դուք էլ էք ասում, Աստուած էլ
այդպէս է կարգադրել, բայց մեզանում այդ-
պէս չէ. ինչիցն է:

Լուցին ամենքը և զիտէին ի՞նչ պատաս-
խանել. նորից խօսեց Սոկրատէսը:

— Ես ինքս էլ չգիտեմ. չենք կարող միա-
սին մի բան վճռել. եկէք ես ձեղ հարցնեմ,
իսկ դուք պատասխանեցէք. նախ ասացէք՝ ու-
մից մարդ աւելի օգուտ է ստանում, վարձկան
ստրուկից, թէ ընկեր բարեկամից:

— Յայտնի բան է ընկերից, պատասխա-
նեցին բոլորը:

— Վարձկան ստրուկը մտածում է ոչ թէ
տիրոց, այլ իւր օգտի մասին, իսկ ընկերը
հոգս կը րաշէ իրան պէս քո մասին, ասաց մէկը:

— Վարձկան ստրուկը կը մնայ քեզ մօտ,
մինչև որ փող ունես, կամ մինչև ժամանակը
լրանայ, իսկ նորա գնալուց յետոյ, կը մնաս
մենակ, ասաց միւսը:

— Ընկերը նորանով է թանգ, որ անբախ-
տութեան ժամանակ քեզ չի թողնիլ. իւր վեր-
ջին ունեցածը քեզ հետ կը կիսէ, ասաց մի-
երբորդը:

— Լաւ ընկերոց հետ դու էլ կը լաւանաս,
ասաց չորրորդը:

— Անա, դուք բոլորդ էլ համաձայն էք,
որ ընկերն աւելի թանգ է, բան վարձկան
ստրուկը. ասաց Սոկրատէսը և թէ այն մար-
դը չէ հարուստ, ուժեղ, ուրախ ու հանգիստ,
ով որ շատ վարձկաններ ունի, այլ նա ով որ
ունի շատ ընկերներ: Ուրեմն դուք բոլորդ էլ
նախաղասում էք ընկերներին ստրուկներից և
երեխ ամենքդ էլ աւելի ընկերներ ունէք, քան
թէ ստրուկներ:

— Խոկապէս, այնպէս պէտք է, բայց հա-
կառակն է դուրս գալիս, ասաց մէկը:

Եթէ գու հարցնես՝ թէ մեզանից ամեն
մէկս ինչքան թշնամի ունի, իսկոյն կհա-
շուենք, ասաց մի ուրիշը. վարձկան-ստրուկներ
նոյնպէս շատ կտժնենք, իսկ հաւատարիմ ըն-
կերներ, եթէ մէկը ունենայ մի-երկու հատ,
այդ էլ մեծ բան կլինի:

— Ինչո՞ւ է այդպէս, հարցրեց Սոկրատէսը.
գուր ասում էր, որ ընկերը գլխաւոր բանն է,
այն ինչ չունէք, եթէ գիտենանք, որ մեզ եղ-
ներ են հարկաւոր, շատ կպահենք. իսկ ինչո՞ւ
ընկերներ չունէք, բանի որ գիտէք, թէ նորա
օգուտ ու ուրախութիւն կրերեն ձեզ և նեցուկ
կլինեն դժբաղտութեան ժամանակ:

— Որովհետեւ, ասաց մէկը՝ լաւ եղներ շատ
են գտնւում, իսկ լաւ մարդիկ քիչ. գութանի
համար եղ հարկաւորուի, լաւը կընտրես ու կը
գնես. իսկ եթէ ընկերի պէտք ունենաս, լաւին
մրտեղից կգտնես. մարդիկ շատ կան, բայց լա-
ւերը քիչ են:

— Այդ ճշմարիտ է, ասաց Սոկրատէսը.
իսկ գութանի համար, ո՞ր եղին ես լաւ ասում:

— Այն, որը վարում է, ուժեղ ու հան-
դարտ է:

— Իսկ լաւ ընկեր ո՞րին կանուանես, ասաց
Սոկրատէսը:

— Նորան, ով որ ոչ միայն իւր, այլև ու-

րի չների մասին է մտածում, որը եթէ լսէ ըն-
կերոջ տկարութիւնը, կերժայ իսկոյն իմանա-
լու, թէ մի որ և է բան նորան հարկաւոր չէ
և եթէ պէտք լինի, կօգնէ, փող հարկաւոր լի-
նի, կտայ: Ահա այդպէսին ես լաւ կասեմ:

— Իսկ ինչպէս կճանաչես այդպիսի մար-
դուն:

— Նորա բարի գործերից:

— Իսկ նա քեզ ինչպէս կճանաչէ, հարց-
րեց Սոկրատէսը:

— Երեխ նոյն կերպ:

— Իսկ ե՞րբ կընկերանաս, հարցրեց Սոկ-
րատէսը. եթէ գու հարկաւորութիւն ունենաս,
թէ, եթէ նա:

Բոլորը լռեցին և չգիտէին ինչ պատաս-
խանել:

Այդ ինչպէս որ գուք չգիտէր, ասաց Սոկ-
րատէսը. զօր օրինակ, եկել է քեզ մօտ մի հա-
րեան. ոչ նա է քեզ ճանաչում, ոչ գու նորան.
ինչպէս իմանաս, թէ նա լաւ ընկեր կլինի,
կսպասես, որ նա քեզ օգնէ, թէ գու նորան
կօգնես:

— Իմ կարծիքով, աւելի լաւ է սպասել,
որ տեսնենք, թէ նա ինչ կանէ, ասաց մէկը:

— Իսկ նա կասէ, թէ աւելի լաւ է սպա-
սեմ, որ տեսնի, թէ գու ինչ կանես, այն ժա-

մանակ գուրք երբէք ընկերներ չէք կարող լինել:

— Ճշմարիտ ես ասում Սոկրատէս, ասաց միւսը:

— Բոլորս ուզում ենք, որ ուրիշները մեզ լաւութիւն անեն, իսկ մենք սկսել դժուարանում ենք, ասաց երրորդը:

— Այդ պատճառով էլ ասում ենք, որ լաւ եղներ շատ կան, իսկ լաւ մարդիկ ըիշ և ինչու նոցանից պահանջել լաւութիւն, քանի որ մենք վատ ենք և մեղադրում ենք ուրիշներին, ասաց չորրորդը:

Եւ ասաց Սոկրատէսը: Մենք խօսեցինք, որ մարդիկ միասին ապրեն լաւ է և աւելի լաւ է ապրեն սիրով, քան թէ կոռուփ: Ասում էք, թէ բարեկամութիւնն ամենից թանգ է, թէ բարեկամութիւնն այն է, որ մարդ մարդու բարութիւն անէ, իսկ ինքներս այդ չենք ուզում անել, այլ պահանջում ենք ուրիշներից. այդ պատճառով էլ մենք խաղաղութեան ու ուրախութեան մէջ չենք ապրում, այլ թշնամութեան և ցաւերի:

Թ.

Ի՞նչ Պէտք է ԻՄԱՆԱՅ ԱՄԵՆ ՄԱՐԴ.

Մէկ անգամ Սոկրատէսը վերադառնում էր

աշխատանքից, տեսաւ, որ մի հով տեղում ժողովուրդ է հաւաքուել և շատ ծանօթներ կան. Նա մօտեցաւ և բարեց:

— Մենք վազուց ρեզ սպասում ենք այստեղ. ասացին նորան, նստիր, ρեզ հետ պէտք է խօսենք:

Հազիւ զեռ Սոկրատէսը նստել էր, ամեն կողմից սկսեցին նսրա մօտ մարդիկ հաւաքուել. ով որ այդտեղից անցնում էր, կանգնում էր. որին ասացին, թէ Սոկրատէսը պատի մօտ նստած ուստուցանում է, իսկ որն էլ, ինքը տեսաւ ու մօտեցաւ, արհեստաւորները թողին իրանց գործը և գնացին Սոկրատէսին լսելու:

2որս մարդ սկսեցին հարց ու փորձ անել Սոկրատէսին, թէ ինչ պէտք է սովորեցնել երեխաներին:

— Ասացին, Սոկրատէս, խորհուրդ տներ, թէ ինչ անենք. մեր երեխաները մեծացել են, ուզում ենք որ մարդ դառնան. համկացրն թէ ինչպէս ու ինչ սովորեցնենք նոցա:

— Իսկ ինչ էիք մտածել այդ մասին:

— Այ, ես կուզէի, որ որդուս տայի դարբնութիւնն սովորելու, ասաց մէկը:

— Իսկ ես իմիս քարտաշութիւն. գուէլ, Սոկրատէս, այդ արհեստով էիր պարապում:

— Ես բոլոր կեանքս հողագործ եմ եղել,
կուզէի, որ որդիս էլ ինձ հետ աշխատէր:

— Իմ որդիս ուսման սէր ունի, ուզում է
դեղ պատրաստել սովորել:

— Այդ բոլորը լաւ, պատասխանեց Սոկրա-
տէսը. ամեն մի մարդ պէտք է աշխատի ուրի-
շի օգտի համար. այնպէս չէ, հարցրեց Սոկ-
րատէսը: Եթէ մենք ունենանք բալոր արհեստ-
ները, արգեօք ամեն բան կըլինի, ինչ որ պէտք
է. հարկաւոր լինի տուն կամ տաճար շինել,
կգնանք քարտաշի և ատաղձագործի մօտ. նոր
նաւեր պէտք կլինի շինել, կգնանք նոյնպէս ա-
տաղձագործի մօտ: Իսկ երբ հարկաւոր լինի
ամուսնուն վատ կնոջ հետ ապրել, որդուն ժը-
լատ հօր, եղբօրը իբարկացող եղբօր, հարկա-
նին չար հարկանի, տանտիրոջը հպարտ հիւ-
րի, մարդուն օտար մարդու, այն ժամանակ որ
արհեստաւորին կանչենք:

— Դորա համար արհեստներ չկան, միայն
մարդ պէտք է արդարադատ լինի, ասաց մէկը:

— Այդ դէպքում պէտք կգան ատաղձա-
գործն էլ, քար կրողն էլ, բժիշկն էլ, ասաց
մի ուրիշը:

— Այդ գործը ամեն մի լաւ մարդ պէտք
է գիտենայ, ասաց երրորդը:

— Քո ասածից երեսում է, որ բացի իրան

արհեստակց, ամեն մարդ պէտք է դեռ իմանայ,
թէ ինչպէս ապրի միւս մարդկանց հետ, վրայ
բերեց չորրորդը:

— Այդպէս էլ դուրս է գալիս, ասաց Սոկ-
րատէսը, որ բացի իրան արհեստից, դեռ մի
բան էլ կայ, որ ամեն մարդ պարտական է գի-
տենալ:

— Այդ գործն արդէն, ով ինչպէս հասկա-
նում է, այնպէս էլ պէտք է անէ, ասաց մէկը:

— Այդ չես կարող սովորել, ինչպէս որ
արհեստը, ասաց մի ուրիշը:

— Եւ ինչպէս սովորել, ասաց երրորդը:

— Այդ սսվորել չի կարելի, ասաց չոր-
րորդը:

— Զարմանալի բան է, ասաց Սոկրատէսը.
մենք չենք կարող այն անել, ինչ որ ամենա-
կարևորն է. ասա դու գոնէ, դիմեց նա մէկին,
թէ քեզ համար որն է աւելի, թանգինոջ հետ
լաւ ապրել, թէ լաւ կօշիկներ ունենալ:

— Ես պատրաստ եմ ամբողջ կեանքս բո-
րիկ ման գալ, միայն թէ կնոջս հետ հաշտ
ապրեմ:

— Իսկ ո՞րն է աւելի վատ՝ հօր հետ
խոռվ լինել, թէ թանգ զգեստներ ունե-
նալ:

— Յայտնի բան է, որ ամեն տեսակ շո-

րից մարդ կըհրաժարուի, միայն թէ կու չըլինի:
 - Իսկ ո՞ր ցաւն է աւելի վատ՝ տեսդը,
 թէ այն, որ ոչ մի մարդ քեզ չէ սիրում:
 - Վերջին ցաւից աւելի վատը չկայ:
 - Ուրեմն գուրս է գալիս, թէ այն գործը, որն ամեն մարդ պէտք է իմանայ, թանգէ բոլոր միւսներից. բարձր է կօշկակարութիւնից, ատաղձագործութիւնից, բժշկութիւնից. այդ ամենը սովորել կարելի է, իսկ ամենակարեսը և բարձր գործը ոչ, ուրեմն մարդ կարող է աստղերը համարել ու բոլոր բոյսերը ճանաչել, իսկ չգիտէ թէ մարդկանց հետ ինչպէս պէտք է ապրել, այնպէս չէ:

- Երեխ մի բան կայ, պատասխանեցին Սոկրատէսին:

- Ես էլ այդպէս եմ կարծում, ասաց Սոկրատէսը: Մեզանից առաջ մարդիկ են ապրել, բայց արդեօք բան չեն ասել այդ մասին. գոնէ մի արձանագրութիւն լինէր տաճարի վերայ. արդեօք այնտեղ ինչ է գրուած, այդ հին ժամանակուայ բան է. չինի այն մասին է, ինչ որ մենք խօսում ենք՝ թէ մարդ մարդու հետ ինչպէս պէտք է ապրի:

- Այնտեղ գրուած է ոչ թէ այդ մասին, այլ թէ՝ «Ճանաչիր ինքդ քեզ», պատասխանեցին Սոկրատէսին:

— Կտրելի է հինց այդ են կամեցել ասել՝ «Ճանաչիր ինքդ քեզ». գուցէ, եթէ մենք մեզ լաւ ճանաչենք, կիմանանք, թէ ինչպէս պէտք է ապրել:

- Հասկացներ մեզ այդ, Սոկրատէս, ասաց մէկը:

- Դուք դիտէք, որ ես բացատրել չեմ կարող, այլ միայն հարցեր կտամ, իսկ գուք ինձ պատասխանեցէք: Ահա, եզները տանում են խաղող, ապա, ինձ ասացէք, թէ ով է ճանաշում եզներին և ով խաղողը. արդեօք նաև, որ ուտում է եղի միսը և խաղողը, թէ նաև, որ գիտէ եզները և այդիները կառավարել:

- Յայտնի բան է, նա, ով որ կառավարել գիտէ:

- Իսկ որպէս զի անասունը լաւ պահուի ու խաղողը լաւ աճի, ինչ պէտք է իմանալ:

- Պէտք է իմանալ, երբ կերակրել, երբ աշխատեցնել և երբ փորել, երբ բանալ:

- Իսկ այդ լաւ անելու համար, պէտք է իմանալ, թէ ինչ է հարկաւոր անասունին և այգուն. այնպէս չէ: Նոյնն էլ չէ արդեօք մեր վերաբերութեամբ. մենք մեզ ճանաչում ենք, երբ գիտենք, թէ մեզ ինչ է պէտք. բայց արդեօք գիտենք, թէ մեզ ինչ է պէտք:

— Ինչպէս չէ, այդ մենք բոլորս գիտենք,
ասաց մէկը:

— Մարդ չկայ, որ չգիտենայ, թէ իրան
ի՞նչ է պէտք, ասաց մի ուրիշը:

— Հիմայ քեզ ի՞նչ է պէտք, հարցրեց Սոկ-
րատէսը:

— Ինձ շատ բան է հարկաւոր, բայց ա-
մենակարեւորը հարստութիւնն է. եթէ հարուստ
լինէի, ամեն բան կունենայի:

— Եթէ ինձ հարցնէիր, Սոկրատէս, ասաց
միւսը, ես կասէի ոչ թէ հարստութիւն, այլ իշ-
խանութիւն մարդկանց վերայ. եթէ իշխանու-
թիւն ունենայի, հարստութիւն էլ կլինէր:

— Իսկ ինձ, ասաց երրորդը, հարստութիւն
ու իշխանութիւն պէտք չեն. ես միայն կուզե-
նայի ապրել չափաւոր, կպարապէի գիտութիւն-
ներով և ոչ ոք ինձ չէր խանգարի:

— Իսկ ինձ, ասաց չորրորդը, հարկաւոր է,
որ իմ անունս յայտնի լինի և ամենքը ինձ
յարգեն:

— Այս ինչ է, ասաց Սոկրատէս. հարցնում
եմ թէ ի՞նչ է պէտք, որ եզները կուշտ լինին
և խաղովը լաւ, բոլորդ մի բան էր ասում.
բայց ահա հարց տուի թէ մարդուն ի՞նչ է
պէտք, բոլորդ զահագան բաներ ասացիք: Ու-
րեմն տեսնում էր, որ մենք մեզ չենք ճանա-

չում, որովհետև ճանաչել ինքն իրան, նշանա-
կում է գիտենալ, թէ մարդուն ի՞նչ է պէտք:
Դու ասում ես, հարստութիւն է պէտք, ասաց
Սոկրատէսը: մենք բոլորս համաձայն ենք քեզ
հետ. մեզ նոյնպէս հարկաւոր կլինի հարստու-
թիւն. բայց ինչպէս մենք նորան բաժանենք.
համաձայն ես դու հաւասար բաժանելու:

— Ոչ, այն ժամանակ էլ ի՞նչ հարստու-
թիւն կլինի, ասաց առաջինը:

— Ուրեմն, մենք չենք կարող քեզ հետ
համաձայնել. ասաց Սոկրատէսը: Արգեօք երկ-
րորդի հետ չենք համաձայնի. եթէ քեզ իշխա-
նութիւն է պէտք, ինձ նոյնպէս պէտք է. ինչ-
պէս մենք միասին իշխենք մէկը միւսին վերայ:

— Մենք էլ չենք կարող բաժանուել, ա-
սաց երկրորդը և ծիծաղեց:

— Ուրեմն, քեզ հետ էլ չենք համաձայն,
ասաց Սոկրատէսը: Արի քեզ հետ քննենք, դի-
մեց նա երրորդին. որ ասածով տեսնենք կա-
րող ենք մենք լաւ ապրել: Դու ասում ես, որ
քեզ միայն հարկաւոր է համեստ ապրել և գի-
տութիւնով պարապել, որը գու սիրում ես:
Չոր օրինակ, ես ուզում եմ նուագել սրնդի վե-
րայ, որը սիրում եմ. ուզում եմ ուտել, խմել,
երբ կամենամ, նուագել և լսել լաւ երաժիշտ-
ների, բայց այնպէս, որ ոչ ոք իհձ չխանգա-

բէ. եթէ ես կողքիդ ապրեմ, գուցէ քեզ խանգարեմ և դու էլ ինձ. երբ սկսես բարձր ձայնով ոտանաւորներ կարդալ. ասենք թէ, մենք կրաժանուենք, բայց ցամա այն է, որ ո՞վ մեզ կկերակրէ. դու ինձ համար կերակուր չես պատրաստի, որովհետև գիտութիւն ես սովորում, իսկ ես քեզ համար չեմ պատրաստի, որովհետև սրինգ եմ սիրում. դու կասես մենք ըստրուկներին կըհրամայենք անել. բայց չէ որ նորա էլ կուղենան սրնզի վերայ նուագել և ասուղերը համարել. այն ժամանակ մենք ինչ անենք. ուրեմն քո գործն էլ յարմար չէ. այն, ինչ որ քեզ հարկաւոր է. ամենքին չի կարող պէտք գալ. Ապա ուրեմն, մենք դեռ չենք ճանաչել մարդուն:

— Իսկ իմ կարծիքի մասին ինչ կասես, ասաց շորրորդը.

— Քոնը, գործին աւելի մօտ է, ասաց Սոկրատէօը. Դու ասում ես, թէ միայն հարկաւոր է, որ մարդիկ քեզ յարգեն. ուզիդ է և այդ ամեն մարգու պէտք է. դու ուզում ես, որ ես քեզ յարգեմ, իսկ ես ուզում եմ, որ դու ինձ յարգես. այդպէս էլ միւսները կցանկան. բայց ինչպէս ստիպել մարդկանց, որ յարգեն մեզ.

— Հինց այդ է դժուարը, ասաց մէկը:

— Այն, դժուար է, ասաց Սոկրատէս. բայց բանն էլ գորանումն է. ինչ էլ ասելու լինէք, բոլորի վերջն այն է, որ մարդիկ մեզ բարութիւն անեն, յարգեն և չխանգարեն, որ մեր բաւականութեան համար ապրենք, այնպէս չէ:

— Իսկ այդպէս է, հաստատեցին բոլորը:

— Դու ասացիր, որ քեզ պէտք է հարըստութիւն, դու իշխանութիւն, դու ազատ պարապել գիտութիւնով, դու պատիւ. Դուք բոլորդ էլ ուզում էք, որ մարդիկ ձեզ չխանգարեն ապրելու, ձեզ բարութիւն անեն. այդ ուրիշներին նոյնպէս պէտք է. ուրեմն հարկաւոր է, որ ձեզ համար արուած բարութիւնը չխանգարէ և ուրիշներին բարութիւն անելու:

— Մենք խօսեցինք եղների և խաղողի մասին: Եթէ դու ասում ես, որ եղին ջուր խմացնող է պէտք, այդ չի նշանակում, որ նա պէտք է զրհորը այնպէս պղտորէ, որ ուրիշները պղտոր ջուր խմեն և չես ասում, որ նա պէտք է քոլոր ուտելիքը ոտի տակ ձգէ, որպէս զիմիւսները փշացածն ուտեն: Եթէ դու ասում ես, որ խաղողի որդին հարկաւոր է արձակ տեղ, այդ չի նշանակում, թէ ասում ես, որ պէտք է մօտի վագերը կտրել և արձատահան անել: Նոյնին է և մարդկանց վերաբերութեամբ.

եթէ մենք ճանաշենք մարդկանց և հասկանանք
թէ նոցա ի՞նչ է պէտք, այն ժամանակ կիմա-
նանք, որ նա այն չպէտք է անէ, ինչ որ ու-
րիշներին խանգարում և վնասում է. այն-
պէս չէ:

Բոլորը համաձայնեցին:

— Այդպէս էլ մենք կիմանանք, թէ մարդ
ի՞նչ պէտք է անէ. մենք ուզում ենք, որ մեզ
բարութիւն անեն, իսկ ով է մեզ բարիք ա-
նողը:

— Մարդիկ, պատասխանեցին Սոկրատէ-
սին:

— Իսկ մենք ի՞նչ ենք:

— Նոյնպէս մարդ ենք, ուրեմն մենք ի՞նչ
պէտք է անենք:

— Մարդկանց բարութիւն և ահա հասանք
մեր նպատակին, ասաց Սոկրատէս:

— Մենք մեզ հարցըինք, թէ ով ենք և
վճռեցինք, որ այդ գիտնալու համար, հարկա-
ւոր է իմանալ, թէ մեզ ի՞նչ է պէտք: Մենք
սկսեցինք քննել և բոլորս համաձայնեցինք, թէ
մեզ հարկաւոր է առաջինը՝ որ մարդիկ մեզ
չխանգարեն ապրելու, իսկ երկրորդ՝ որ մեզ
բարութիւն անեն. իսկ որպէս զի նորա բա-
րութիւն անեն, պէտք է որ մենք էլ մարդ-
կանց նոյնն անենք: Ահա այս է այն ուսման

սկիզբը՝ թէ ի՞նչ պէտք է գիտենայ ամեն մի
մարդ:

— Այդ այդպէս, ասաց մի մարդ, բայց
միշտ չի կարելի իմանալ, թէ ի՞նչ գործով
խանգարում ես ուրիշին և որ գործը բարի կամ
չար կլինի:

— Դու ուղիղ ես ասում, ասաց Սոկրա-
տէս. մենք ստէպ սխալվում ենք դորա մէջ:
Դարբնի ու կօշակարի աշակերտներն էլ չուտ-
շուտ սխալվում են սովորելիս, բայց վարպետները
սովորեցնում են նոցա այն, ինչ որ իմացել են
իրանց ուսուցիչներից: Ահա ես էլ ձեզ եմ ա-
սում այն, ինչ իմ ուսուցիչներս են ինձ սովո-
րեցրել և Աստուծոյ ձայնը, որ ես լսում եմ
հոգւոյս մէջ, այդ խղճի ձայնն է, որ ամեն
մարդ լսում է իւր հոգու մէջ, եթէ միայն ա-
կանջ դնէ նորան. իսկ եթէ ականջ չդնէ, կը
սովորի ուսուցիչներից: Մարդիկ թողնուած չեն
առանց առաջնորդի ամենահարկաւոր գործե-
րում: Այն ժամանակուանից, երբ մարդիկ կան,
աշխարհիս երեսին, նորա սովորում են, թէ
ի՞նչպէս միասին ապրեն և բոլորի մէջ դրուած
է միևնոյն այդ ձայնը, որը ամեն մէկին սովո-
րեցնում է այդ նոյնը: Ամեն գործ գիտնալը
լաւ է, բայց ամենահարեսրն է սովորել ապ-

րել առանց խանգարելու մարդկանց և նոյա
միշտ բարութիւն անել:

Ժ.

ՍՈԿՐԱՏԵՍ ԴԱՏԱՍՏԱՆԻ ԱՌԱՋ

Ելդպէս ուսուցանում էր Սոկրատէս և ու-
նէր շատ ընկերներ ու անձնուէր աշակերտներ.
բայց ունէր և շատ թշնամիներ և ինչպէս թըշ-
նամիներ զինէին։ Սոկրատէսի ուսմունքը շա-
տերի ունքը շինելու տեղ աչքն էր հանում.
բոլոր հարուստները նորան չէին ոիրում. Սոկ-
րատէս ուսուցանում էր, որ ամօթ չէ աշխա-
տելը, այլ ամօթ է պարապ մնալը և որ միայն
աշխատողներին Աստուած տալիս է իսկական
յաջողութիւն. իսկ հարուստներն ապրում էին
անփործ և պարծենում էին իրանց պարապու-
թեամբը։ Սոկրատէս սովորեցնում էր, որ լաւ
մարդը չի մտածում զգեղ ապրելու մասին, այլ
ճշմարտութեան և միայն անխելք մարդիկ աշ-
խատում են հարստանալ։ Իսկ հարուստները
միայն այդ մասին էին մտածում և զգեղու-
թեան ու հարստութեան մէջ էին տեսնում
մարդուս բաղդը։

Սոկրատէսի թշնամիները խօսում էին

միմեանց հետ թէ այդ Սոկրատէսն անհան-
գիստ մարդ է. իւր գասատութեամբ միայն
վրդովում է ժողովրդին և թշնամացնում է մեր
դէմ մեր որդիկերանց. նորա նորան աւելի են
հաւանում, քան թէ մեզ. Եւ նորա ամենաշար
թշնամիները վճռեցին, որ մի հնարքով պէտք
է նորանից ազատուել, որովհետեւ նա միայն
խանգարում է մարդկանց անհոգ ապրելու և
օգտուելու կեանքի բոլոր բարիրներով։

Մի այսպիսի յանցանք պէտքէ բարդելնո-
րա վերայ, որ այդ պատճառով կանչեն նորան գա-
տի, մտածում էին Սոկրատէսի թշնամիները։

Նորա մտածեցին մեզադրել Սոկրատէսին,
որ նա չի հաւատում աստուածներին և փշա-
ցնում է ժողովրդին։

Եւ յայտնեցին Սոկրատէսին, թէ յանցա-
ւոր է ու պէտք է դատուի։ Սոկրատէսի աշա-
կերտները շատ տիրեցին ու ցաւեցին, որով-
հետեւ լաւ գիտէին որ իրանց ուսուցիչը ոչինչ
վատ քան չէ արել և հաւարուելով Սոկրատէսի
մօտ սկսեցին խնդրել. առես, լաւ մտածիր, ու-
սուցիչ, թէ ինչ պէտք է խօսես դատաւոր-
ների առաջ ըստ պահութեան համար։

Մէկ հարուստ աշակերտ առաց՝ եթէ դու
վրդովուած ես և չես կարող մտածել, թէ ինչ
ասես, թնդ, որ ես գնամ մի մարդու մօտ. նա

լաւ վարձով կգրէ ամեն բան, ինչ որ դատարանում պէտք է խօսես, դու տանը կկարդաս, իսկ յետոյ այնտեղ դատաւորներին կասես և անշուշտ քեզ կարդարացնեն:

Սոկրատէս պատասխանեց աշակերտներին՝ հանգստացէք իմ բարեկամներս, ոչ մի ճառ ես իմ պաշտպանութեան համար շպիտի խօսեմ. իմ կեանքս ինձ պաշտպան կըլինի:

Իսկ երմօգէն աշակերտն ասաց՝ միթէ դու չգիտես, Սոկրատէս, որ դատաւորները արդարացրել են մեղաւորին, եթէ նա կարողացել է գեղեցիկ և ճարտարութեամբ արդարանալ և մեղադրել են անմեղին, որը չէ կարողացել սրտաշարժ խօսքերով և պաշտպանելով դատաւորների սիրտը մեղմացնել:

— Իսկ ինձ, ասաց Սոկրատէս՝ թող դատեն իմ բոլոր կեանքիս գործերով։ Ես ոչ մի բանից չեմ վախենում. ես հոգւոյս մէջ զգում եմ մի աստուածային ներշնչումն, որ իմ մեռնելու ժամանակն հասել է։ Մինչև հիմայ ես ոյժ ունէի հեռու մնալու ամեն մի վատ բանից և մարդկանց օգուտ բերելու, իսկ հիմայ արդէն հասել է խորը ծերութեանս ժամանակը. վախենում եմ թուլանալ ոչ միայն մարմնով, այլ և հոգուվ. ուրեմն աւելի լաւ է մեռնեմ։

Սոկրատէսին կանչեցին դատի։ Նորան դատելու հաւաքուեցին հինգ հարիւրից աւելի դատաւորներ. հաւաքուեցին մեղադրողները, եկաւ և Սոկրատէս։

Յունաստանում դատաստանական գործերը վճռում էին քաղաքային հրապարակի վերայ և միշտ հաւաքում էր լսելու շատ մեծ բաղմութիւն։

Այգալէս էր և այս անգամ։

Դուրս եկան մեղադրողները և ասացին՝ Սոկրատէսը մեղաւոր է նորանով, որ չէ հաւատում մեր աստուածներին, այլ քարոզում է մի նոր Աստուծոյ մասին։

— Դատաւորներ և քաղաքացիք, ասաց Սոկրատէս, ես ապրել եմ Ալիքսրում վաթսուն ու ինը տարի. իմ կեանքս ամենքին յայտնի է. ես ուսուցանում էի հրապարակների վերայ, տաճարների մօտ, եթէ մէկը լսել է ինձանից աստուածներին հակառակ մի բան, կամ տեսել է, որ մի վատութիւն արած լինեմ, թող ասէ։

Բոլորը լուռ էին։

— Աստուածների կամքը իմանալու համար մեղանում գործ են դնում սուրբ գուշակութիւններ, իսկ ես ձեզ ասել եմ որ Աստուծոյ կամքը նոյնպէս կարելի է իմանալ, եթէ

ականց դնենք մեր հոգու ձայնին, որովհետև
նա է մեղ տալիս աստուածային ներշնչումն:

Դորա դէմ էլ Սոկրատէսին ոչինչ չպա-
տասխանեցին:

Այդ ժամանակ, նորից խօսեցին մեղա-
դրողները՝ Սոկրատէսը էլի մեղաւոր է նորա-
նով, որ իւր ուսմունքով փշացնում է երիտա-
սարդներին:

— Քաղաքացիք, պատասխանեց Սոկրատէս,
ես սովորեցրել եմ ձեր զաւակներին այն, ինչ
որ անհրաժեշտ է ամեն մի մարդու գիտենալ:
Ուսուցել եմ նոցա հասկանալ Աստուծոյ ձայնը
և թէ ինչ է խոհեմութիւնն ու անխոհեմու-
թիւնը, ճշմարտութիւնն ու սուտը, բարին ու
շարը. ես ասել եմ ծերին էլ, երիտասարդին
էլ՝ միք որոնիր հարստութիւն և փառք. միք
մտածիր առաջ մարմնու վերայ, թէ ինչպէս
երջանկացնէք նորան, այլ հոգու: Մտածեցէր,
թէ ինչպէս ուրիշ մարդկանց օգուտ բերէք և
ամենից բարձր նախադասուցէք ճշմարիտ կեան-
քը: Ես ուսուցել եմ այնպէս, ինչպէս ինձներ-
շնչել է Աստուծոյ ձայնը և իմ ուսմունքի հա-
մար ես պատրաստ եմ համբերել ոչ թէ մէկ,
այլ հազարաւոր պատիժներ:

Լոեց Սոկրատէս. մեղադրողներն էլ չպի-
տէին ինչ խօսեն:

Այն ժամանակ Սոկրատէսն ասաց՝ ես ա-
ւելի ոչինչ չեմ կարող խօսիլ ինձ արդարա-
ցնելու համար. ես գիտեմ, որ շատերը դատա-
ւորների սիրտը գութ ձգելու համար երկար
ճառեր են ասում, դատարան են բերում ի-
րանց ազգականներին, որպէսզի նոցա արտա-
սուքները և խնդիրները շարժեն դատաւորների
սիրտը. բայց ես այդ չեմ անում, ոչ թէ այն
պատճառով, որ ոչ ոք չունիմ ինձ համար խնդ-
րով. չէ որ ես էլ բարից ու փայտից չեմ ծլ-
նուած, ես էլ ունեմ ազգականներ, կին, զա-
ւակներ և անձնուէր բարեկամներ. բայց ես
նոցա այստեղ չեմ կանչելու, որ խնդրեն ինձ
համար, որովհետև այդ ես ձեզ դատաւորնե-
րիդ համար անպատճութիւն եմ համարում.
Գուր պէտք է վճիռ կայացնէք ոչ թէ ինձ վե-
րայ խղճալով, այլ արդարութեամբ. այդպէս
պէտք է ձեզ թելազրէ ձեր սիրտը և գորա
համար օրէնքներ են նշանակուած:

Դատաւորները սկսեցին միասին խորհուրդ
անել. դատաւորների մէջ էլ շատ կային Սոկ-
րատէսի թշնամիներից, բայց այնուամենայնիւ
նոցա կէսը վճռեց, որ Սոկրատէսին ոչ մի
բանի համար յանցաւոր չէ կարելի համարել:
Բայց հակառակորդները յաղթեցին և գա-
տաւորներն ասացին՝

Սոկրատէսը մեղաւոր է։
Մեղադրողներն ասացին՝ մեղաւոր է և
արժանի է մահուան։

Հանգիստ լսեց Սոկրատէս և ասաց դա-
տաւորներին՝ մեղադրողները պահանջում են իմ
մահս, բայց օրէնքը թոյլ է տալիս ինձ ընտ-
րելու էլի ուրիշ պատիժներ. ուրեմն լսեցէք
ինձ. ես կարող էի խնդրել, որ փոխանակ մա-
հուան դատապարտելու, ինձ յաւիտեան ձգէիք
բանտ, բայց ինչո՞ւ է պէտք այդ տեսակ կեան-
քը. անօգուտ կըլինի ուրիշների համար և ծա-
նըր ինձ համար. ես օրէնքով կարող էի ընտ-
րել աքսոր ուրիշ երկրներում, բայց ինչ կեանք
կըլինի ինձ ծերուկիս համար, թափառել օ-
տար երկրներում։ Օրէնքը թոյլ է տալիս և
մեծ փող տալ իմ ազատութեան համար, ես
ինքս թէև փող չունեմ, բայց ընկերներս և
աշակերտներս՝ Պղատօնը, Կրիտօնը և էլի ու-
րիշներն, ուրախութեամբ ինձ համար կըտանի,
ինչքան որ պէտք է. համաձայն էք դուք, քա-
ղաքացի դատաւորներ։

Դատաւորները ոչինչ չպատասխանեցին
նորան, այն ժամանակ Սոկրատէսն ասաց՝
—Եթէ ես ինձ մեղաւոր զգայի, պատ-
րաստ կըլինէի ամենածանր պատիժը կրել,
բայց իմ խիղճս արդար է. ես ոչ որի վատու-

թիւն չեմ արել և ազնիւ ծառայել եմ իմ հայ-
րենիքիս։ Ընդհանուրի օգտին իմ արածս ծա-
ռայութիւնների և աշխատանքների փոխարէն,
դուք պէտք է որ իւձ արժանացնէք ամենա-
մեծ պարզեի, ինչպէս որ մեղանում ընդու-
նուած է տալ ծառայութիւն արած քաղաքա-
ցուն—այսինքն մինչև իմ կեանքիս վերջն ինձ
պահել, հասարակութեան հաշուով. իսկ դուք,
քաղաքացիք, փոխանակ այդ անելուն, ինձ
կանչեցիք դատի, լսեցիք իմ թշնամիներիս
խօսքերը և մուացաք իմ ծառայութիւններս։

Դատաւորները նեղացան. այդ ի՞նչ է,
Սոկրատէսը մեղ սկսում է մեղադրել մեր վար-
մունքի համար. այդ մենք առանց նորան էլ
գիտենք, խօսեցին նոքա իրար մէջ։

— Իսկ դուք, նորան աւելի լսեցէք, սկսե-
ցին գրգռել թշնամիները. թէ, դուք նոյնպէս
ուզում էք լինել նորա աշակերտ։

— Եւ յիրաւի, արդէն ժամանակն է դա-
տը վերջացնելու, ասացին դատաւորները։

Նորա էլի երկար ժամանակ խորհուրդ ա-
րին և յայտնեցին այսպիսի վճիռ։

Սոկրատէսին մահուան ենք դատապար-
տում, նա պէտք է մի աման թոյն խմէ։

Սոկրատէսը լսեց վճիռն առանց այլայլու-
ելու և ասաց դատաւորներին՝ ցաւում եմ ոչ

Նորա համար, ինչ որ ինձ սպասում է, այլ որ
դուք խայտառակեցիք ձեզ և ձեր ժողովրդին
նորանով, որ դատապարտեցիք անմեղին. շտա-
պեցիք, դուք քաղաքացիք, ազատուել անհան-
գիստ բնաւորութիւն ունեցող մարդուց, որը
չէր վախինում ոչ որի ասել ճշմարտութիւնը.
մահն առանց այն էլ, ինձ ծերուկիս ետևից
ընկած է: Խնդրում եմ ձեզ մի բանի համար՝
երբ իմ որդիքս մեծանան, սովորեցրէք նոցա
այն, ինչ որ ես ձեզ սովորեցրի: Եթէ նկա-
տէք նոցա մէջ հարստութեան և պատուի ծա-
րաւ, մեղադրեցէք նոցա այնպէս, ինչպէս որ
ես ձեզ և ձեր որդիներին էի մեղադրում.
գորանով ինձ ցոյց կըտաք ամենամեծ երջան-
կութիւնը և փոխարէնը կըհատուցանէք, ինչ որ
ես ձեզ համար արել եմ: Իսկ հիմայ, մնաք
բարեւ, ժամանակը հասաւ բաժանուելու. դուք
ապրեցէք, իսկ ես գնում եմ մեռնելու. որը
արդեօք մեղանից երջանիկ կըլինի, այդ միայն
Սստուած գիտէ:

ԺԱ.

ՍՈԿՐԱՏԷՍԸԸ ԲԱՆՏԻ ՄԷԶ

Առ հասարակ դատապարտեալներին պատ-
ժում էին դատի միւս օրը, բայց Սոկրատէսի

վճիռը աօներին էր, երբ մեղք էր համարում
կատարել մահուան պատիժը. Սոկրատէսին այդ
բոլոր ժամանակը տարան բանտ, որտեղ նա
անցկացրեց իւր կեանքի վերջին երեսուն օ-
րերը, սպասելով մահուան:

Ամեն օր բանտ էին գալիս Սոկրատէսին
այցելելու նորա աշակերտները և նա շարու-
նակում էր ուսուցանել նոցա, իսկ երբ մենակ
էր մնում, յօրինում էր ոտանաւորներ. նա չէր
զգում ոչ թուլութիւն և ոչ էլ մահուան սար-
սափի:

Տօներն արդէն վերջանալով էին. աշակերտ-
ներին դառն էր մտածել, որ շուտով յաւի-
տեան զրկուելու են իրանց թանկագին ուսուց-
չից. արդեօք կարելի չ' մի որ ե է կերպով
փրկել նորան, խօսում էին նորա իրար մէջ:

Եւ վճռեցին բանտի պահապանին կաշա-
ռել, գիշերով հանել Սոկրատէսին բանտից և
ծածուկ տանել օտար երկիր:

Սոկրատէսի հետ այդ մասին խօսել
յանձն առաւ Կրիտօնը: Միայն երկու օր
էր մնացել տօները վերջանալուն, ուշացնել
չէր կարելի. երեկոյիհան ուշ բաժանուեցին ա-
շակերտները և վճռեցին, որ հէնց վաղը ա-
ռաւօտ, որրան կարելի է շուտ Կրիտօնը գը-
նայ համոզելու Սոկրատէսին:

Կրիտօնի քունը չէր տանում. ուրախ միտրը, թէ դեռ հնարք կայ ազատելու թանկագին ուսուցչին մահից, նորան չէր թողնում քնելու. հէնց որ սկսեց լուսանալ, նա վեր կացաւ, հագնուեց և գնաց դէպի բանտ. պահապանը ճանաշում էր նորան, այդ պատճառով, համաձայնեց խոկոյն թողնել Սոկրատէսի մօտ:

Սոկրատէսը դեռ քնած էր. Կրիտօնը ըդդուշութեամբ մտաւ և նստաւ նորա անկողնի մօտ. երկար ժամանակ չզարթեց Սոկրատէս և Կրիտօնը նայելով նորա վերայ, զարմանում էր, թէ մարդ ինչպէս կարող է այդպէս հանգիստ քնել պատճից մի օր առաջ.

Երբ Սոկրատէս բացեց աշքերը, շատ դարմացաւ տեսնելով Կրիտօնին:

— Երեխ արդէն ուշ է, ասաց նա, ինչու ինձ չզարթեցրիր, Կրիտօն:

— Ոչ, դեռ շատ վաղ է, պատասխանեց Կրիտօնը. դեռ արելը գուրս չի եկել. ես հիացած էի քո հանգիստ քնով և ուրախանում էի քո փոխարէն, որ դու կարող ես քնով մոռանալ անբախտութիւնդ և քեզ սպանացող մահը. ես միշտ զարմանում էի քո հանգստութեան վերայ, բայց չէի սպասում, որ այսպիսի դարհուրելի օրերին էլ հանգիստ կըմնաս:

Սոկրատէս ժպտաց և ասաց՝ ուրեմն, դու

քիչ ես ճանաշել ուսուցչիդ. բայց ասա, ինչու այսօր այդպէս վաղ ես եկել. մի թէ նորա համար, որ տեսնես, թէ ես ինչպէս եմ քնում: — Ոչ, ես քեզ մօտ մի մեծ խնդիրք ունիմ և ոչ միան իմն է այդ, այլ քեզ անձնուէր շատ մարդկանց — սկսեց Կրիտօնը անհամարձակ:

— Խօսիր շուտով, ասաց Սոկրատէսը:

— Մենք վճռել ենք քեզ մահից ազատել. հնարք կայ, գիշերը ծածուկ քեզ բանտից փախցնել:

Սոկրատէս դէմքը խոժոռեց. Նա տխուր և խիստ նայեց Կրիտօնի վերայ:

— Լսիր ինձ, ուսուցիչ, ասաց Կրիտօնը. չէ որ դու անարդար կերպով ես մեղադրուած. յիշիր, թէ դեռ որչափ բարիք կարող ես անել մարդկանց համար. խղճա փոքրիկ երեխաներիդ վերայ. խղճա մեզ, համաձայնիր փախչել բանտից: Մենք արդէն ամեն բան կարգադրել ենք, պահապաններին կարելի է կաշուել, իսկ քեզ փոխած շորերով կըփախցնենք մօտակայ երկիրը, ուր ես ունեմ ծանօթ մարգիկ. նորա ուրախութեամբ քեզ կընդունեն իրանց մօտ. մենք այնտեղ կըերենք և քո երեխաներին. նորա քեզ մօտ կմեծանան և որք չեն մնայ: Մենք բաւական փող ունենք, դու

գիտես, որ ես հարուստ եմ, իսկ բացի ինձանից և միւս աշակերտներդ պատրաստել են փող քեզ աղատելու համար, որովհետև դու մեղ համար թանգ ես ամեն բանից. աղաչում եմ քեզ, համաձայնիր փախչել, մտածելու ժամանակ չկայ. միայն այս գիշեր կարելի է անել այդ. չե՞ որ սա վերջին օրն է:

Կրիտօնը խօսում էր յուղուած, արտասուրն աշքերին, բայց տեսնում էր Սոկրատէսի երեսից, որ նա իրան խօսքերը լսողը չէ: Երբ Կրիտօնը վերջացրեց, Սոկրատէսն ասաց.

— Ծնորհակալ եմ քեզանից, Կրիտօն, ես գիտեմ, որ դու ինձ բարի ցանկալով ես վըճռել այդ անել. գիտեմ, որ բոլորդ սիրում էք և երախտապարտ էք ինձ. բայց միայն զգացմունքը չպէտք է լինի մեր խորհրդականը: Իմ աղատուելուս համար ես պէտք է գործ դնեմ խարեբայութիւն և քանդեմ տուածս խօսքը. Ես ասացի դատաստանում, որ հաղատակւում եմ դատաւորների վճռին, որ պատրաստ եմ տանքուելու իմ ուսմունքիս համար և ոչ մի չարչարանք չի կարող ինձ ստիպել հրաժարուելու այդ խոստմունքից: Ասենք, թէ դուք ինձ կենդանի կհանէք բանտից. կենդանի, բայց ոչ այն մարդուն, ինչպէս այստեղ մտայ, այլ դուք

կտանէք ինձ ինչպէս մի խարեբայի. այդ է ձեր ուզածը:

Կրիտօնը զգում էր, որ Սոկրատէսը ճշշմարիտ է ասում, բայց յօյսը չէր կտրում բոլորովին, որ դեռ աղատել կարող է նորան:

— Ով քեզ ճանաչում է, նա չի հաւատայ, որ դու խարեբայ ես. դու միայն խարած կըլինես այն վատ մարդկանց, որոնք քեզ անարդար դատապարտեցին, ասաց Կրիտօնը. իսկ միւսները կուրախանան քոազատութեան համար:

— Ոչ, Կրիտօն, վճռողաբար պատասխանեց Սոկրատէս՝ ես կիսաբեմ ոչ միայն իմ թշնամիներիս, բայց և բոլոր մարդկանց և իմ խըլճիս մատնած կլինեմ: Ես ամբողջ կեանքիս մէջ ուսուցել եմ, որ մարդ երբէք չպէտք է անարդար լինի. եթէ ես ինքս այդպէս վարուեմ, յետոյ ով կհաւատայ այն բանին, ինչ որ ես նորան սովորեցրել եմ. ես կհեռանամ բանտից, թշնամիներիցս, իսկ ուր վախչեմ իմ խղճիս ձայնից: Թոնդ այդ անիրագործելի մտադրութիւնգ, սիրելին Կրիտօն. քաջութեամբ պատրաստուենք միասին տանելու այն, ինչ որ անհրաժեշտ է:

Կրիտօնը հասկացաւ, որ ուսուցին աղատել չեն կարող և տխուր-տրտում գնաց յայտնելու ընկերներին Սոկրատէսի պատասխանը:

ԺԲ

ՍՈԿՐԱՏԵՍԻ ՎԵՐՁԻՆ ԽՕՍՑԱՑՈՒԹԻՒՆԸ

Պատժի օրը հասաւ. այն ժամանակուայ սովորութեամբ, այդ կատարում էին արել մայր մտնելուց առաջ: Բանտի գոների մօտ առաւօտուանից հաւաքուել էին Սոկրատէսի աշակերտները և նոցանից շատերը դառն կերպով լալիս էին:

Դուրս եկաւ բանտի պահապանը և ասաց աշակերտներին՝ իսկոյն Սոկրատէսի շղթաները կարձակեն և ձեզ ներս կրթողնեմ:

Քիչ լետոյ, բացին բանտի գոները. աշակերտները Սոկրատէսին գտան անկողնի վերայ. նորա անկողնի մօտ կանգնած էր իւր կինը, զրկած փորբիկ երեխային. տեսնելով ամուսնու աշակերտներին, կինը լաց եղաւ ասելով վերջին անգամ նորա գալիս են ըեզ մօտ, Սոկրատէս. վերջին անգամ նորա բեզ կը լսեն:

Կինը լաց էր լինում, պոկում էր իւր մագերը, Սոկրատէսը խնդրեց աշակերտներին, որ նորան տուն տանին:

Սոկրատէսն ուզեց վեր կենալ, բայց ոտքերը սաստիկ թմրել էին և ցաւում էին ծա-

նըլ շղթաներից, նա սկսեց շփել և դորանից ցաւն աւելի թեթևացաւ:

— Բարեկամներս, այ նկատեցէք, ասաց նա աշակերտներին՝ որ ամեն մի տանջանքից հեռու չէ և միխթարութիւնը. միթէ վաղուց է որ շղթայի ծանրութիւնից այս ոտք ցաւում էր, բայց հիմայ, ինչպէս լաւ է, թեթև է. այդպէս էլ լինում է ամեն մի տանջանքի ժամանակ. հիմայ արդէն կանգնել էլ կարող եմ:

Աշակերտները շրջապատեցին Սոկրատէսին. նորա ուզում էին և խօսել և լսել նորան. բայց արտասուրներից զժուարանում էին մի խօսք անգամ արտասանել և մտածել միայն կարող էին Սոկրատէսի սարսափելի մահուան ժամի և դառն բաժանման մասին. բայց դորա վերայ չէին վստահանում խօսել. ուսուցիչը հասկացաւ, թէ ի՞նչ էր կատարւում նոցա սըրտերում:

— Տեսնում եմ, զիտեմ ես, որ դուք ինձ խղճում էր և ոչ միայն խղճում, այլ և սարսափում էր իմ փոխարէն: Ի՞նչպէս ես ձեզ միխթարեմ ու քաջալերեմ. նայեցէք ինձ վերայ, ես հանգիստ եմ, ոչ մի բանի համար չեմ ափսոսում և ոչնչից չեմ սարսափում. հոգիս թեթև է և պարզ: Իմ կեանքս ես վերջացնում եմ բանտում, դատապարտուած լինելով մա-

հուան. մարդիկ այդ ամօթ են համարում. բայց
միթէ ամօթ է, երբ չարչարում ես ծշմար-
տութեան, այլ ոչ թէ մի որսէ վատ, ամօթա-
լի գործի համար. մարդիկ զրպարտել, դատա-
պարտել են ինձ, բայց ես չեմ կարող բարկա-
նալ նոցա վերայ և արհամարհել. ես գիտեմ, որ
նոքա այդպէս վարուեցին առանց հասկանալու:
Ես մեղադրում էի նոցա, ցոյց տալով սխախե-
րը և այդ անում էի նոյն իսկ իրանց երջան-
կութեան համար. բայց նոքա ինձ չհասկացան
և այդ իմ կողմից համարեցին վատութիւն.
Նոքա վարուեցին ինչպէս անհասկացող երե-
խաներ: Ես կրացատրեմ այդ օրինակով. ասենք
թէ, հիւանդ երեխաների մօտ նշանակուած է
մի մարդ, որը կատարում է նոցա բոլոր ցան-
կութիւնները. իսկ յետոյ զալիս է մի բժիշկ և
սկսում է աշխատել միայն, որ նոցա բժշկէ.
Ինչ էք կարծում, ում կուղենային իրանց մօտ
պահել հիւանդ երեխաները. ի հարկէ նորան,
որը ոչ մի բանում չէր հակառակում նոցա,
իսկ բժշկից կուղենային ազատուել. նոքա կա-
սէին՝ այս մարդը մեզ չարչարում է, արդելում
է մեզ ուտել ու խմել մեր ուզածը, տալիս է
դառն դեղեր, կարում է, այրում է, դուրս ա-
նենք նորան և աւելի լաւ կլինի, որ նա էլ չը-
փերադառնայ մեզ մօտ. իմ հակառակորդներս

էլ, ինձ նոյնպէս չհասկացան, ինչպէս երեխա-
ները բժշկին:

Այդ ասաց Սոկրատէս ու կանգնեց, նկա-
տելով, որ Կրիտօնն ուզում է նորան բան ասել:

Սոկրատէս, ասաց Կրիտօնը. դու գիտես,
որ մեզ համար թանգ է ըստ ամեն մի խօսքը,
բայց խնդրում ենք քեզ, դադարիք խօսելուց.
բանտապետը հէնց նոր մեզ ասաց, թէ ով որ
վերջին ժամերին շատ և տաք խօսի, նորա
վերայ թոյնը ուշ կներգործէ, այնպէս որ հար-
կաւոր կինի աւելի խմել:

— Ծնորհակալութիւն յայտնեցէք բանտա-
պետին իւր խորհրդի համար, իմ սիրելի բա-
րեկամներս և խնդրեցէք իմ կողմից, որ աւելի
թոյն պատրաստէ. ես նորան կխմեմ, ոչ թէ
մէկ, այլ երկու, երեք անգամ, եթէ հարկաւոր
լինի. իսկ մինչի այն ժամանակ, եկէք խաղաղ
խօսակցենք. ես դեռ շատ բանի մասին ու-
զում եմ ձեզ հետ խօսել. ինձ աւելի մօտ նըս-
տեցէք:

Սոկրատէս նստեց անկողնի վերայ, իսկ
աշակերտները տեղաւորուեցին նորա շուրջը,
ամենից մօտ նստած էր նորա Փէդօն աշա-
կերատը, որն ունէր զեղեցիկ երկար մազեր.

Սոկրատէս սիրում էր խօսակցութեան
ժամանակ շինի և խառնել նորա մազերը. այդ-

պէս էլ այս անգամ, Փէդօնը նստեց նեղ նըստարանի վերայ, անկողնի մօտ և Սոկրատէս ձեռքը դրել էր նորա գլխին։

— Ի՞նչ ես կարծում, Փէդօն, ասաց ուսուցիչը, որտեղ կըլինեն վաղը քո գեղեցիկ մազերը։

Յոյների մէջ սովորութիւն կար ի նշան ցաւակցութեան, կտրել մազերը և ձգել այն գերեզմանի վերայ, ում համար որ սգում էին. այդ էր ակնարկում Սոկրատէսը։ Ուսուցչի խօսքերն իսկոյն յիշեցրեց աշակերտներին, իրանց սպառնացող վշտի մասին. նոցանից մի բանիսը լաց եղան։

Սոկրատէս ասաց՝ բարեկամներ, ես մահից չեմ վախենում, սարսափելի չէ մեռնելը, այլ սարսափելի է անխելը և ապականուած կեանք վարելը։

ԺԳ.

ՍՈԿՐԱՏԷՍԻ ՄԱՀԸ

Սոկրատէսը լրեց. աշակերտները սպասում էին, որ նու էլի կըլիօսի։ Ուսուցիչն ասաց՝ ժամանակն անցնում է, արդէն ուշ է։ Կերթամ կըլուացուեմ, որ յետոյ ուրիշներին

նեղութիւն չտամ, իմ դիակս լուանալու. իսկ դուք ինձ սպասէք, ինձ հետ եղէք մինչև վերջը։

Սոկրատէս գնաց միւս սենեակը լուացուելու, նորա հետ գնաց և Կրիտօնը. իսկ միւս աշակերտները նորան սպասելով, խօսում էին սւսուցչի վերջին խօսակցութեան, նորա մահուան մասին և թէ նորանից յետոյ ինչպէս պէտք է ապրին որբացած, առանց թանգագին առաջնորդի։ Երեկոյ եղաւ. այն սենեակում, որտեղ էին աշակերտները, պահապանը ներս թողեց Սոկրատէսի ազգականներին, կնոջը և երեխաններին. յետոյ եկաւ և Սոկրատէս ու սկսեց մնաս բարե ասել նոցա. կանայք այնպէս էին լաց լինում, որ Սոկրատէսը խընդեց նոցա դուրս տանել։

Այն ժամանակ աշակերտներն ասացին Սոկրատէսին՝ ասաւ մեզ քո վերջին ցանկութիւնը. կարելի է դու ուզում ես զաւակներիդ համար կարգադրութիւն անել. մենք ուրախութեամբ կըկատարենք ամեն բան, ինչ որ դու հրամայես։

Սոկրատէս պատասխանեց նոցա՝ ես կայք ու հարստութիւն չունիմ, որ կարգադրութիւն անեմ. վարուեցէք այնպէս, ինչպէս ես ձեզ սովորեցրի։ Ահա այդ է իմ բոլոր ցանկութիւնս.

այն ժամանակ կիմանար, թէ ի՞նչ պէտք է ա-
նել և իմ զաւակներիս համար:

— Իսկ ի՞նչպէս կը հրամայիս քեզ թաղել.
Սոկրատէս, հարցը Կրիտօնը:

— Ինչնեւ գու ինձ հարցնում ես այդ մա-
սին, բարկութեամբ ասայ Սոկրատէս. միթէ
գու չէիր տեսնում, որ ես իմ ամբողջ կեան-
քումս հոգս էի քաշում մարմնիս մասին միայն
նորա համար, որ նա ծառայէ հոգուս, իսկ երբ
հոգիս բաժանուի մարմնիցս, մինոյն չէ ինձ
համար, թէ ի՞նչ կը լինի մարմնիս հետ:

Սոկրատէս թեք ընկաւ անկողնի վերայ
և պատրաստուել էր խօսել աշակերտների հետ,
երբ գուռը բացուեց և մտաւ ոստիկանը. նա
եկել էր բանտ դատաւորների հրամաննե-
րով:

— Սոկրատէս, ասաց նա, երբ ես գալիս
էի ուրիշ դատավարտեալների մօտ, որ յայտ-
նէի նոցա, թէ ժամանակն է թոյն խմելու,
նոքա դիմաւորում էին ինձ կոխներով և ա-
նէծքներով. ես քեզանից այդ չեմ սպասում,
որովհետի դեռ երբէր, այս բանտի մէջ, քեզա-
նից աւելի բարի ու ճշմարիտ մարդ չէ եղել:
Դու ինձ վերայ չպէտք է բարկանաս, այլ նոցա,
որոնք րո մահուան պատճառն են եղել. գու
զիտես, թէ ի՞նչ լուր եմ բերել քեզ:

բարե, աշխատիր քաջութեամբ տանել այն,
ինչ որ մենք մեր կամքով փոխել չենք կարող:

Ասաց նա այդ ու հեռացաւ Սոկրատէսի ան-
կողնի մօտից, որովհետև արտասուրը չէր կա-
րող բռնել:

— Մնաս բարե և գու, պատասխանեց Սոկ-
րատէս, հեռացող ոստիկանին, կը կատարեմ ա-
մեն բան ինչ որ հարկն է. իսկ յետոյ, ասաց
նորա մասին աշակերտներին՝ ի՞նչպէս լաւ մարդ
է. նա շուտ-շուտ գալիս էր այստեղ ինձ հետ
խօսելու. ի՞նչպէս անկեղծ նա ինձ խղճում է:
իսկ հիմայ ժամանակն է, բարեկամներս, ասա-
ցէք, որ թոյնը բերենք:

— Ինչնեւ էր շտապում, ուսուցիչ, սկսեց
նորան համոզել աշակերտներից մէկը. արեք
դեռ չէ անցել լեռների ետեք. ուրիշ դատա-
պարտեալներ դեռ ժամանակ են գտնում ու-
տել, խմել և իրանց բարեկամների հետ մնալ.
դեռ ժամանակ կայ:

— Թոնք ուրիշներն այլպէս անեն, երեխ
նոցա համար թանգ է մի քիչ գոնէ իրանց
կեանքն երկարացնել. իսկ իմ կեանքս վերջա-
ցած է և հարկաւոր չէ երկարացնել, պատաս-
խանեց Սոկրատէս. կատարեցէք, ինչ որ ա-
սացի:

Աշակերտներից մէկը նշան արեց այդտեղ

կանգնող պահապանին, որն և գնաց թոյնը բերելու:

Նորա ետելից մտաւ բանտապետը, թոյնով ամանը ձեռքին: Ճնորհակալ եմ քեզանից, բարեկամ, ասաց նորան Սոկրատէս. սովորեցրու, թէ ինչ անեմ հիմայ:

— Թոյնը խմելուց յետոյ, դու պէտք է այնքան ման գաս, մինչև որ ոտքերումդ ծանրութիւն զգաս, պատասխանեց բանտապետը. այն ժամանակ պառկիր անկողնի վերայ, որովհետեւ այդ նշան է, որ թոյնը սկսել է ներգործել:

Առանց այլայլուելու Սոկրատէս առաւնորա ձեռքից ամանով թոյնը և խմեց մինչև տակը:

Ամբողջ օրն աշակերտներն իրանց զսպում էին, բայց այդ ժամանակ չդիմացան և սկսեցին լաց լինել. միայն Սոկրատէսն էր, որ չէր շփոթում և գլուխը կորցնում:

— Ի՞նչ էր անում, դուք, բարեկամներս, խրատում էր նա նոցա. ես հեռացրի կանանց և երեխաններին, որպէսզի շտեսնեմ նոցա փոքրովութիւնը, իսկ դուք նոցանից աւելի լաւ չէր վարւում. ուրեմն այդպէս էք դուք ինձ լսում:

Սոկրատէս թոյնը խմեց և անդադար ման

էր գալիս, ինչպէս ասաց բանտապետը. բայց ահա, նա զգաց, որ ոտքերը ծանրացան և իսկոյն պառկեց մէջքի վերայ. աշակերտները շըրշապատեցին նորա անկողինը:

Բանտապետը մօտեցաւ և մատներով սաստիկ սեղմեց նորա ոտը:

— Յաւ զգում ես, հարցրեց նորան:

— Ոչ, պատասխանեց Սոկրատէս:

Բանտապետը սեղմեց ոտի վերևի մասը և այնտեղում Սոկրատէս արդէն ոչինչ չզգաց:

— Այդ նորանից է, որ նորա մարմինը ըսկում է սառել և փետանալ. մինչև սիրտը կըսառի և այն ժամանակ ամեն բան կվերջանայ. ասաց բանտապետն աշակերտներին:

— Բարեկամներ մեռնում եմ. ճնորհակալութիւն արէք Աստծուն, ասաց Սոկրատէս:

Ընկան աշակերտները ուսուցչի վերայ, սկսեցին նորան կանչել, բայց նա չպատճասխանեց. նա անշարժ պառկած էր. յետոյ նորա մարմինը դողաց, շրթունքները և աչքերը անշարժ մնացին: Աշակերտների առաջ արդէն պառկած էր սիրելի ուսուցչի անշունչ դիակը. նոցանից մէկը ծածկեց նորա աչքերը:

Այդպէս ապրեց և մեռաւ Սոկրատէս, բայց չմեռաւ նորա վարդապետութիւնը և աշակերտներից ամենալաւերը շարունակեցին

Նորա բարի գործը՝ ուսուցանում էին մարդկանց բարութիւն և ճշմարտութիւն։ Իսկ իրանց սիրելի, իմաստուն, մեծ ուսուցչի խրատները գրեցին և այդպէս, նոցա ձեռագրերից, իմացանք և մենք։

Սովորած ապրում էր Յիսուս Քրիստոսի աշխարհ գալուց հորս հարիւր տարի առաջ։



16/VI-46
ԿԱՐՄԻՐ



ՆՈՅՆ ԹԱՐԳՄԱՆՀԻՆԻ Է

1.	Յովհան Գուտէնբէրդ	— 15
2.	Դօկտօր Զէններ	— 20
3.	Մանկական թատրոն	— 1
4.	Իբսէնի, Նօրա	— 30
5.	Լիր Արքայ	— 5
6.	Գայլ	— 3
7.	Թառլիք և Հին գրքեր	— 5
8.	Տիրուացի աղջիկ և Ժլատ	— 5
9.	Մեր պապի գաւազանը	— 5
10.	Անչանդիստ գիշեր	— 5
11.	Ռոսի գնդակ	— 5
12.	Մայրական սէր	— 5
13.	Մրցումն	— 5
14.	Գէորգ Կրաբբ	— 5
15.	Չինական առասպելներ	— 15
16.	Զինուոր Յակով	— 7
17.	Կեանքի դպրոց	— 10
18.	Օնիկն ու մարդարիտը, Նապաստակն և ողնին, Գայլն ու մարդը	— 10
19.	Աստղէ դրամ, Հարուստը և աղքա տը, Սպիտակ օձ	— 7
20.	Մատանի, Թռչնիկ, Չար մտքով չէ —	7
21.	Յունաց ուսուցիչ Սոկրատէսը	— 20

937

2013

0025178

ՀՀ Ազգային գրադարան



NL0025178

